

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն է լինելու գիտական առարկայականությունն ու ճշմարտությունը, միայն ճշմարտությունը, ամբողջ ճշմարտությունը՝ համոզված, որ անգամ ամենադառն ճշմարտությունը առելի օգտակար է, քան ոսկեզօծ ու շաքարապատ սուտը»:

**Միմոն Վրացեան**

Խմբագիր՝ ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

ՀԱՅԱՍՏԱՆ

Վլադիմիր Բարխուդարյան

Սերգեյ Սարինյան  
Աշոտ Մելքոնյան  
Ռուբեն Սաֆրաստյան  
Ալբերտ Ստեփանյան  
Սուրեն Դանիելյան  
Համլետ Պետրոսյան  
Սամվել Մուրադյան  
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌՔ

Երվանդ Փամբուկյան – Լիբանան  
Մկրտիչ Մկրտչյան – Լիբանան  
Հարություն Քյուրքչյան – Հունաստան  
Կարո Արմենյան – ԱՄՆ  
Ռուբինա Փիրումյան – ԱՄՆ  
Վաչե Բրուտյան – ԱՄՆ

համահայկական հանդես  
Թ (ԺԵ) տարի, 2017,  
թիվ 1 (57), հունվար-մարտ

**«Վէմ» համահայկական հանդես**


Հրատարակիչ՝ «Վէմ հանդես» ՍՊԸ

0010 Երևան, Մհեր Մկրտչյան փ. 12/1  
հեռախոս՝ 52 18 76, 093 83 93 24

Էլ. փոստ՝ [khoudinyan@yahoo.com](mailto:khoudinyan@yahoo.com)

Ինտերնետային կայք՝  
[vemjournal.org](http://vemjournal.org)

ISSN 1829 – 1864



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1917 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ 3

## ՀԻՄՆԱՔԱՐԵՐ

*Սերգեյ Ն. Սարիյան*  
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ 9

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Ռուբեն Լ. Սանասերյան*  
ԱՐՏԱՇԵՍ Ի-Ը ԵՎ ՀՈՒՄԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ  
(Մ. Թ. Ա. 189-179 ԹԹ.) 28

*Սմբատ Խ. Հովհաննիսյան*  
ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԻՐԻԵՎ  
«ԱՇԽԱՐՀ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»  
ԵՎ արդյունաբերական դարաշրջանի  
մարտահրավերները 49

## ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Թումաս Ս. Էլիոթ*  
ՊՈՅԻՑ ՎԱՆԵՐԻ  
Թարգմանությունը և առաջաբանը՝  
Գևորգ Ա. Ճաղարյանի 77

*Արա Հ. Երնջալյան*  
ՇԵՔՍՊԻՐԻ ՀՈՐԱՑԻՈՅԻ ԵՎ  
ՀՈՒՄԵՐՑԻ ՊՈՆՏ ՀՈՐԱՑԻՈՒՄԻ  
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ  
ՀԱՄԱՊԱՏՄՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 99

*Ռուզաննա Ռ. Ոսկանյան*  
ՊԱՏԻ ՄԻՍՎՈՒԻ ԷՔՋԻՍՏԵՆՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
Ժ.-Պ. Սարտրի, Կ. Աբելի, Լ. Խեչոյանի և  
Գ. Խանջյանի ստեղծագործություններում 106

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Վարդան Զ. Պեղրոսյան*  
ՀԻՆ ՀԱՅՏԵՐԵՆԻ ԵԱՅ ԵՎ ԵԱԻ  
ԵՌԱԲԱՐՔԱՌԱԿԵՐՊԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ  
Տարածամասակյա քննության փորձ 115

*Յուրի Ս. Ավերիսյան*  
ՏԵՂԱՇՈՒԺԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԱՐԵՎԵԼԱՀԱՅՏԵՐԵՆԻ ՀՆՉՑՈՒՆԱՓՈՒՎԱԾ  
ԵՎ ԱՆՀՆՉՑՈՒՆԱՓՈՒՆ ԲԱՂԱԳՐԱԿԱՆ  
ՀԻՄՔԵՐՈՒՄ 125

## ՄՇԱԿՈՒՅԹ

*Մյավի-Ալիկ Մ. Հարությունյան (Մոսկվա)*  
ԺԱՆՐ  
Տարրաթեցումն ու սահմանման բարդությունը 147

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Արարվազդ Գ. Գարբիյան*  
«ՓԻՐՄԱԼԱՔԻ ԳՈՐԾԸ» (1941-1942 ԹԹ.)  
Մի դրվագ ստալինյան բռնաճշումներից 183

## ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

*Վարդան Ա. Գալստյան*  
ԹՅՈՒՐՔԱՆՈՒՄՆԵՐԻ ԷԲԵՆԻԿ  
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՂ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
19-րդ դարավերջի Արևելյան Այսրկովկասի  
թյուրքալեզու և ռուսալեզու մամուլում 193

## ԼՐԱՏՈՒ

*Միրանուշ Գ. Հովհաննիսյան*  
ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԻԻՎՆԵՐԻ  
ՀԱՐԱՋԱՏ ՀԱՅՏԵՐԻՆ  
«ՆԻԽԵՐ Հ. Յ. Դաշնակցության պատմության  
համար» արխիվային փաստաթղթերի  
քազմահատոր ժողովածուի շնորհանդեսը 207

## ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հ. - Գևորգ Ս. Ստեփանյան, Համազասպ  
Սրվանձտյանց 213

## ԱՐԻԻՎ

*Երուանդ Գ. Փանյուքեան (Պէլրոս)*  
ԱՎ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՏԱՄՆԱՄԵԿԻՆ» ՊՈԷՄԻՆ ՇՈՒՐՁ 220

*Արարատ Մ. Հակոբյան*  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱՋՆՈՒՆՈՒ ՄԵԾ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ  
Մաս երկրորդ: Ստալինյան բռնաճշումներից  
մինչև արդարացում (փաստաթղթեր) 230

## ՀԱՎԵԼՎԱԾ

*Միրարփի Մ. Տեր-Ներսեսյան*  
ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԱԿԻ  
ՄՈՏՅՈՒՄ 1 (283)

*Միրանուշ Ա. Բեգարյան*  
ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ  
ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈՐԸ IX (291)

CONTENT 302

СОДЕРЖАНИЕ 303

Սմբատ Խ. Հովհաննիսյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԻԲՐԵՎ «ԱՇԽԱՐՀ–ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

Եվ արդյունաբերական դարաշրջանի մարտահրավերները\*

**Բանալի բառեր** – հայ առևտրականներ, հայ առևտրական կապիտալ, Նոր Զուղա, Ֆերնան Բրոդել, համընդգրկուն պատմություն, ժամանակային ռիթմեր, «աշխարհ-տնտեսություն», քաղաքակրթական մարտահրավերներ:

### Մուտք

Քաղաքակրթությունները, դարերով, անգամ հազարամյակներով պահպանելով իրենց ինքնության ինչ-ինչ հատկորոշիչներ, գտնվում են անընդհատ կերպափոխումների մեջ, որոնք ի վերջո հանգեցնում են որակական թռիչքի, և մեկ քաղաքակրթությունն իր տեղը գիշում է մյուսին:

Ըստ այսմ՝ XVI դարից Արևմտյան Եվրոպայում երևում են նոր, արդյունաբերական քաղաքակրթության առաջին ծիլերը՝ աշխարհագրական մեծ հայտնագործություններ, ընդլայնվող համաշխարհային շուկա, Արևմուտքի և Արևելքի միջև արագ զարգացող առևտրական հարաբերություններ: Այս պայմաններում իր աննախընթաց վերելքն էր ապրում հայ առևտրականությունը, ուստի արդի հետազոտություններում նրա գործունեությունն արժևորվում է իբրև նոր ձևավորվող ձեռներեցության ամենացայտուն արտահայտություններից մեկը:

Դարաշրջանի և հայ առևտրականության վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ սկզբնաղբյուրներ<sup>1</sup> և հետազոտություններ<sup>2</sup>, որոնց հիմնա-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 28.01.2017:

1 **Խաչիկյան Լ. Ս.** (խմբ.), ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950; **Խաչիկյան Լ. Ս.** (խմբ.), ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Ա, Եր., 1955; հատ. Բ, Եր., 1958; հատ. Գ, Եր., 1967; **Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա.** (խմբ.), ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Ա, Եր., 1974, հատ. Բ, Ե., 1978, հատ. Գ, Ե., 1984; **Հակոբյան Վ.** (խմբ.), Սմեր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատ. I, Եր., 1951, հատ. II, Ե., 1951; Զաքարիա Ազուլեցու օրագրությունը, Ե., 1938; **Հակոբյան Հ., Ուղեգրություններ**, հատ. Ա, Եր., 1932, Զ, Եր., 1936; Եղիա Կարնեցու դիվանը, Աշխ. **Ա. Գ. Աբրահամյան** և **Ռ. Ա. Աբրահամյան**, Եր., 1968; Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը, աշխ. **Լ. Ս. Խաչիկյան** և **Հ. Գ. Փափազյան**, Եր., 1984, **Սիմեոն Լենացի**, Ուղեգրություն, Եր., 1997; ԺԵ-ԺԸ դարերի ուղեգրություններ, Եր., 2005; Լազարեան առևտրական ընկերության հաշուետումարը (1741-1759), աշխ. **Շ. Խաչիկյան**, Եր., 2006, և այլն: 2 **Լեո**, Խոջայական կապիտալը և նրա հասարակական դերը հայերի մեջ, Եր., 1934; **Ա.Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., 1957, գիրք երկրորդ, Եր.,

կան ուշադրությունը բևեռված է քաղաքական կամ տնտեսական ոլորտներին, ընդ որում, հիմնականում՝ հատվածականորեն: Սակավ են այն հետազոտությունները, որոնք նվիրված են թեմայի քաղաքակրթական դիտարկմանը: Մինչդեռ ֆրանսիական Աննալների («Տարեգրությունք») պատմագիտական դպրոցի ներկայացուցիչների ձեռքբերումների, մասնավորապես՝ Ֆերնան Բրոդելի քաղաքակրթությունների տեսության<sup>3</sup> համատեքստում հնարավոր է դառնում հայ առևտրական կապիտալի ծաղկման և անկման (XVI-XVIII դդ.) ժամանակաշրջանի ըմբռնումը քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական ռիթմերի համադրման միջոցով:

## 1. Հայ առևտրական կապիտալը համընդգրկուն պատմության ժամանակային ռիթմերի համապատկերում

Ներկա հետազոտության ընթացքում ելակետ ենք ընդունել Ֆերնան Բրոդելի «Համընդգրկուն պատմության տեսությունը», որը կառուցակազմվում էր ժամանակի երեք հիմնարար չափումների՝ քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական ռիթմերի համադրմամբ:

Արդ, փորձենք համընդգրկուն պատմության համապատկերում դիտարկել հայ առևտրական կապիտալի «աննախընթաց» վերելքի պատճառները: **Քաղաքական ռիթմը:** 1299 թվականից Իկոնիայի սուլթանության փլուտակների վրա ձևավորվեց Օսմանյան տերությունը, որը սկսեց նվաճել

1959; **Խաչիկյան Լ.**, Տնտեսական գործարքների մասին գրառումներ հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը, Բանբեր Ստանադարանի, 5, (1960), էջ 21-42; նույնի՝ Յովհաննէս Զուղայեցու հաշունտումարը, «Armeiaca», Melanges d'Etudes Armeniennes, Վենետիկ, 1969, էջ 21-42; նույնի՝ Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1662-1693), Annales E.S.C., 22 (1967), pp. 231-277; **Կայբուրյան Վ. Ա.**, Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях). Ереван, 1969; նույնի՝ Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996; Նոր Զուղա, Եր., 2007; **Խաչիկյան Շ. Լ.**, Նոր Զուղայի Հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Ե., 1988; **Զուլայան Մ. Կ.**, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966; նույնի՝ Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 1980; նույնի՝ Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դդ., Գիրք Ա, Քաղաքական պատմություն, Եր., 1990; **Անասյան Հ. Ա.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1962; **Փափագյան Վ. Հ.**, Առևտրաարհեստագործական հարկը Սեֆյան տերության մեջ XVI դարում և վերացման հանգամանքները, ՊԲՀ, 2, (1984), էջ 112-122; նույնի՝ Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դդ., Ե., 1990; **Խառատյան Ա. Ա.**, Զնյուռնիայի հայ վաճառականությունը միջազգային առևտրում (XVII-XVIII դդ.), ՊԲՀ, 3, (1989); **Թաշիրյան Է. Խ.**, Նոր Զուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, Մաս 1, Եր., Պատմ. ինստ., 2012; նույնի՝ Հնդկահայ գաղութը և հայ ազատագրական միտքը (XVII դդ.), XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը, Եր., 1989; **Барсегов Ю. Г.**, Из истории борьбы Армянского купечества против Европейского пиратства в XVII в., ՊԲՀ, 2, (1984), сс. 35-42; **Զեքիյան Պ. Լ.**, Խոջա Սաֆար՝ Շահ Աբրահիմի ղեկավար Վենետիկի մեջ, ՊԲՀ, 1, (1983), էջ 105-116; նույնի՝ The Armenian Way to Modernity, Supernova, Venezia, 1997; **Baghdiantz-McCabe I.**, The Shah's Silk for Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750), Atlanta, Ga: Scholars Press, 1999; **Babaie S., Babayan K., Baghdiantz-McCabe I., Farhad M.**, Slaves of the Shah. New Elites of Safavid Iran, London: I.B. Tauris, 2004; **Aslanian S. D.**, From the Indian Ocean to the Mediterranean, The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa. Berkeley-New York-London: University of California Press, 2011; էջ 66-80 և այլու:

3 Տես **Հովհաննիսյան Ս.**, Ֆերնան Բրոդելի պատմության տեսությունը, «ՎԷՄ», 9 (Թ) տարի, 2011, N 1 (33) ապրիլ-հունիս, էջ 98-119; **Ստեփանյան Ե., Մարգարյան Ե.**, Ժամանակի կառույցը Ֆ.Բրոդելի պատմահայեցողության ծիրում, Պատմություն և կրթություն գիտատեսական և մեթոդական հանդես, N 1-2, Եր., 2005, էջ 33-42; **Alberto Tenenti W. Z.**, Fernand Braudel et l'histoire économique et sociale, Vierteljahrschrift für Sozial- und Wirtschaftsgeschichte, 73. Bd., H. 3 (1986), pp. 362-365; **Wallerstein I.**, Braudel on the Longue Durée: Problems of Conceptual Translation, Review (Fernand Braudel Center), Vol. 32, No. 2, Commemorating the Longue Durée (2009), pp. 155-170:

Փոքր Ասիայի արևմտյան շրջանները, ապա նաև Բալկանները<sup>4</sup>: 1453 թվականին օսմանցիները գրավեցին Կոստանդնուպոլիսը, և Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց: Աստիճանաբար ձևավորվեց Օսմանյան տերության պետական կառույցը<sup>5</sup>: Դրանից հետո օսմանցիներն ավելի ակտիվորեն սկսեցին ծավալվել դեպի Դրիմ: Իսկ արևելքում նրանց հրապուրում էին Փոքր Ասիայի արևելյան շրջանները, Հայաստանը, Անդրկովկասը և Իրանական Ատրպատականը:

Այս ծավալումն ի վերջո հանգեցրեց օսմանցիների և Սեֆյան Պարսկաստանի բախմանը: Արդարիվ շրջակայքից սերող շեյխ Սեֆիի կրոնապետությունը (ղզլբաշներ) վերածվել էր հզոր տերության: 1502 թվականին շահ Իսմայիլը կործանեց ակ-կոյունլուներին և իր տիրապետությունը հաստատեց Անդրկովկասի, Հայաստանի և Հյուսիսային Միջագետքի վրա:

Ինչպես Օսմանյան տերությունը, այնպես էլ Սեֆյան Պարսկաստանը նախ և առաջ ձգտում էին Մերձավոր Արևելքում հաստատել իրենց գերիշխանությունը<sup>6</sup>: Խնդիրն ուներ իր շեշտված տնտեսական պատճառը. երկու կողմերն էլ ցանկանում էին իրենց ձեռքը գցել Հեռավոր Արևելքից եկող ցամաքային առևտրական ձանապարհները, որոնք հսկայական եկամտի աղբյուր էին: Պակաս կարևոր չէին նաև կրոնական ու դավանական հակասությունները. պարսկական կողմը ներկայացնում էր իսլամի շիա, իսկ օսմանյան կողմը՝ սուննի դավանանքը:

Օսմանյան տերության և Սեֆյան Պարսկաստանի հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին սուլթան Սելիմ Յավուզի (Ահեղ, 1512-1520 թթ.) իշխանության տարիներին: Առիթն այն էր, որ շահ Իսմայիլն իր արքունիքում ապաստան էր տվել Սելիմի ընդդիմադիր հարազատներին և այլ երևելի անձանց: Ի պատասխան դրա՝ Սելիմի հրամանով (ըստ նախապես կազմված ցուցակի) Կոստանդնուպոլսում գլխատվեց շուրջ 40 հազար շիա դավանանքի հետևորդ:

1512 թվականին բռնկվեց պատերազմը, որն ընդհատումներով շարունակվեց մինչև 1639 թվականը: Այդ ընթացքում կնքվեցին խաղաղության դաշնագրեր (1515, 1555, 1590, 1612, 1618 թթ.), և կողմերից յուրաքանչյուրը մյուսին հավաստիացնում էր, որ երբևէ չի խախտի «եղբայրությունը»: Սակայն ինչպես նշեցինք վերը, հակասությունները խորն էին: 1516 թվականին օսմանցիները գրավեցին Սիրիան և Հիջազը՝ մուսուլմանական սրբազան Մեքքա և Մեդինա քաղաքներով: Իսկ արդեն 1517 թվականին իրենց ենթարկեցին Եգիպտոսը, և օսմանցիների սուլթանը հռչակվեց խալիֆ՝ բոլոր մահմեդականների հոգևոր առաջնորդ, մի տիտղոս, որն այդուհետ դարձավ բոլոր սուլթանների ժառանգությունը<sup>7</sup>:

1639 թվականի մայիսի 17-ին կնքվեց Կասր-ե Շիրիսի խաղաղության դաշնագիրը, որով սահմանագծվում էին Օսմանյան տերության և Սեֆյան

4 Տե՛ս **Davies N.**, *Europe: A History*, Oxford: Oxford University Press, 1997, p. 560; **Զուլպյան Մ. Կ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դդ., Գիրք Ա, Քաղաքական պատմություն, Եր., 1990, էջ 23; և այլն:

5 Տե՛ս **Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յու. Ա.**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Եր., 1986, էջ 64:

6 Տե՛ս **Զուլպյան Մ. Կ.**, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966, էջ 33:

7 Տե՛ս **Mantran R.** (ed.), *Histoire de L'Empire ottoman*, Paris: Fayard, 1989, 145.

Պարսկաստանի տիրույթները: Ի մասնավորի՝ Հայաստանում սահմանն անցնում էր Ախուրյան-Արաքս-Հայկական պար-Մասիսներ-Վասպուրական-Հյուսիսային Միջագետք գծով<sup>8</sup>: Արևելքն անցնում էր Պարսկաստանին, արևմուտքը՝ Օսմանյան տերությանը:

Այս անվերջ ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմը Հայաստանն էր: Ավերվում էին քաղաքներն ու գյուղերը, կոտորվում էր ազգաբնակչությունը: Մեծ չափերի հասավ ժողովրդի արտագաղթը դեպի Բալկաններ, Եվրոպա, Դրիմ, Ուկրաինա, Լեհաստան, Ռուսաստան: Սակայն դա արհավիրքի մի կողմն էր միայն:

XVI դարի վերջերին և XVII դարի սկզբներին Օսմանյան տերությունում ծավալվեց Զալալիների շարժումը, որն ընդգրկում էր Արևմտյան Հայաստանը, Փոքր Հայքի հարավային և հարավ-արևմտյան շրջանները, ինչպես նաև Սիրիան, Լիբանանը, Միջագետքը<sup>9</sup>: Փաստորեն, Զալալիների շարժումը կաթվածահար էր արել Օսմանյան տերությունը՝ դրանով մեծ հարված հասցնելով նրա ռազմական և քաղաքական հզորությանը: Նկատենք, որ այս նույն ժամանակներում Օսմանյան տերության մեջ մեծ չափերի էին հասել համաճարակն ու բնական աղետները՝ պարբերաբար կրկնվող երկրաշարժերն ու հրդեհները: Համաճարակների արդյունքում անգամ անասունների զանգվածային կոտորումների դեպքեր են արձանագրվում<sup>10</sup>: Այս առումով իտալացի ճանապարհորդ դելլա Վալլեսն իր 1615 թվականի նամակներից մեկում գրում էր, որ «համաճարակն համարյա մշտապես թագավորում է ... Թուրքիայում ու խլում տասնյակ հազարավոր մարդկային զոհեր»<sup>11</sup>: Իսկ XVI դարի վերջերի երկրաշարժերի մասին (1584, 1598, 1648 թթ.) հաղորդում է Առաքել Դավրիժեցին<sup>12</sup>:

Փոքր Ասիայում Զալալիների ապստամբությունը ճնշելուց հետո Օսմանյան տերության հիմնական խնդիրներից մեկը դարձավ երկրի քայքայված տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության վերականգնումը:

Ինչ վերաբերում է Սեֆյան Պարսկաստանին, ապա նրա համար շրջադարձային եղավ 1587 թվականը: Շահ Սուլթան Մոհամմադ Խուդաբանդեն (1577-1587 թթ.) գահը զիջեց Աբբաս I-ին (1587-1629 թթ.)՝ 17-ամյա իր կրտսեր որդուն<sup>13</sup>: Հայրական ժառանգությունն այս երիտասարդ արքան ընդունեց չափազանց ծանր պայմաններում և անմիջապես ձեռնամուխ եղավ Պարսկաստանի ռազմաքաղաքական, դիվանագիտական և տնտեսական հեղինակության վերականգնմանը: Ներքին անվտանգության ապահովման և վարչական համակարգի վերակառուցման համար Օսմանյան տերության հետ 1590 թվականի մարտի 21-ին Կ.Պոլսում կնքեց դաշնագիր (թեկուզ նվաստացուցիչ): Դա հնարավորություն էր տալիս ապահովելու

8 Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984, էջ 353:

9 Տե՛ս Անդ, էջ 217:

10 Տե՛ս Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915 էջ 24:

11 Տրվում է ըստ Զուլայան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը, էջ 307:

12 Տե՛ս Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 494-495:

13 Տե՛ս The Timurid and Safavid Periods, The Cambridge History of Iran (CIH), vol. 6, ed. by P. Jackson, et al., Cambridge: Cambridge University Press, 1986, p. 261; Newman A. J., Safavid Iran: Rebirth of a Persian Empire, London-New York: I. B. Tauris & Co Ltd, 2006, p. 43.

երկրի արևմտյան սահմանների անվտանգությունը<sup>14</sup>:

Այնուհետև Սեֆյան տիրակալը «վերականգնում է» պետության կազմում գտնվող քոչվոր «ղզլբաշների» և թյուրքմենների ու պարսիկների միջև խախտված հավասարակշռությունը: Մի կողմից նա ոչնչացնում է ըմբոստ ցեղերին, բռնագրավում նրանց հողերը, մյուս կողմից՝ ղզլբաշական ցեղերին գրկում երկրի առաջատար ռազմական ուժը ներկայացնելու հնարավորություններից: Ուստի հույժ անհրաժեշտ է դառնում բանակի արմատական վերակառուցման հիմնախնդիրը: Կատարվում են վճռական քայլեր: Արդյունքում ստեղծվում է կանոնավոր բանակ, ուր այս անգամ գերակշռում էին պարսիկները: Իրականացվում են ռազմական մի շարք բարեփոխումներ՝ մեծ ուշադրություն դարձնելով տեխնիկական նորամուծություններին: Արդիական բանակ ստեղծելու գործում ներգրավվում են անգլիացի Էնթոնի և Ռոբեր Շիրլի եղբայրները: Նրանց հիմնական խնդիրն էր պարսիկներին ռազմական գործի վերաբերյալ եվրոպական նորություններին ծանոթացնելը և Պարսկաստանում թնդանոթների ու հրազենի արտադրությունը կազմակերպելը<sup>15</sup>: Ստեղծվում են հրացանակիրների և հրետանային զորամասեր: Ընդ որում՝ ղզլբաշական և այլ թյուրքական ցեղերի ռազմական ազնվականության քաղաքական դերը պետության մեջ զգալիորեն նվազում է:

Աբբաս I-ի կառավարման տարիները Սեֆյան պետության համար հանդիսացան և մշակույթի ծաղկման տարիներ. մեծ զարգացում ապրեցին գորգագործությունը, կտորեղենի, գործվածքեղենի, կաշվե գեղարվեստական իրերի արտադրությունը, ոսկերչությունը, բրուտագործությունը:

Պարսկաստանի արտաքին առևտրին զարկ տալու նպատակով շահր օտարերկրյա առևտրականներին շնորհում է առևտրական, կրոնական և իրավական արտոնություններ: Այդ թվում՝ նրանց անձի և գույքի անվտանգության երաշխիքներ: Շահի հրամանով ոչ միայն վերակառուցվում, այլև կառուցվում են նորանոր ճանապարհներ, պահեստներ ու քարվանսարաններ: Բարենպաստ պայմաններ են ստեղծվում թե՛ ներքին և թե՛ արտաքին առևտրի զարգացման համար<sup>16</sup>:

Այս ամենի հետևանքով աստիճանաբար ձևավորվում է «երրորդ ուժի» վրա հենվելու քաղաքականությունը՝ նկատի ունենալով հայերին, վրացիներին և այլ կովկասյան ժողովուրդներին<sup>17</sup>: Միաժամանակ շահր քաղաքացիական պաշտոնեությունը համալրողների մեջ ակտիվացնում է պարսկական տարրի գործունեությունն ու ապահովում դրա գերակշռությունը: Հույժ հատկանշական էր 1598 թվականին պետության մայրաքաղաքը երկրի հյուսիսից՝ Ղազվինից, պարսկական էթնոսով շրջապատված Սպահան տեղափոխելը: Քաղաքի բոլոր ուղղություններով կառուցվում են ուղիղ և լայն փողոցներ, պալատներ (Ալի Ղափու, Չեհել սոթան և այլն), մզկիթներ, կամուրջներ: Շահը մտադիր էր նոր մայրաքաղաքը վերածել հարավը հյուսիսի հետ կապող առևտրական հանգույցի: Իսկ Պարսից ծոցի վրա հսկողության

14 Տե՛ս Newman A. J., op. cit., p. 52.

15 Տե՛ս Ward S. R., *Immortal: A Military History of Iran and Its Armed Forces*, Washington, D.C.: Georgetown University Press, 2009, p. 47.

16 Տե՛ս The Timurid and Safavid Periods, p. 266.

17 Տե՛ս Ibid., p. 270.

հաստատման արդյունքում (1620–1622 թթ.) Սպահանը վերածվում է նաև ծովային առևտրի խոշորագույն կենտրոնի: Դա ուներ և քաղաքական ենթատեքստ, քանի որ երկիրը ձերբազատվում էր Օսմանյան տերությունից ունեցած կախվածությունից: Սպահանը դառնում էր նաև դեպի արևմուտք՝ Օսմանյան տերության դեմ ուղղված քաղաքականության մշակման և իրագործման կարևորագույն կենտրոնը:

Օսմանյան տերության հետ բախումն արդեն անխուսափելի էր. 1603 թվականի սեպտեմբերի 14-ին խախտելով 1590 թվականի պայմանագիրը՝ Աբբաս I-ը ռազմական գործողություններ է սկսում Օսմանյան կայսրության դեմ: Գրեթե առանց լուրջ դիմադրության շահը մեկը մյուսի հետևից նվաճում է օսմանյան ռազմակալման ենթարկված շրջանները (Թավրիզ, Նախիջևան, Երևան և այլն): Սակայն նման հաջողությունները կարճատև էին: Օսմանցիների կողմից ձեռնարկվում են հակակշիռ գործողություններ. շահ Աբբասի դեմ է ուղարկվում մի մեծ զորաբանակ Ջոլա-օղլի Սինան փաշայի հրամանատարությամբ: Ուժերի անհավասարակշռությունը նկատի ունենալով՝ կազմակերպվում է շուտափույթ նահանջ: Ընթացքի մեջ է դրվում Աբբաս I-ի կողմից մտահղացած համապարփակ ծրագրի մի մասը՝ Արևելյան Հայաստանից հայ առևտրական կապիտալը Պարսկաստան տեղափոխելը: 1604 թվականին կազմակերպվում է հայոց մեծ բռնագաղթը<sup>18</sup>: Թեպետ պարսկական զորքերին հրամայված էր տեղահանել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչությանը, այնուամենայնիվ, տեղահանվածների հիմնական զանգվածը կազմում էին հայերը: Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ «միանգամից անմարդաբնակ դարձրեց ամեն ինչով լի ու հուռթի աշխարհս Հայոց, որովհետև դատարկելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քչեց Պարսկաստան, այլ շատ գավառներ»<sup>19</sup>: Արևելյան Հայաստանից (մասամբ նաև Արևմտյան Հայաստանի մի շարք երկրամասերից) Շահ Աբբասն ավելի քան 400 հազար հայերի բռնի տարագրում է Պարսկաստան, իրադարձություն, որը հայտնի է «մեծ սուրբուն» անունով<sup>20</sup>: Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանի մոտ նրա հրամանով և հոգածությամբ հիմնվում է հայկական Նոր Զուղան:

Ընդհանուր առմամբ, օսմանապարսկական պատերազմները, ջալալիների շարժումն ու հայոց «մեծ տեղահանումը», բնակչության (մասնավորապես գյուղացիության) զանգվածային արտագաղթը կաթվածահար էին արել հասարակական արտադրության և վերարտադրության գործընթացը: Դրանք տևական բնույթ ունեին: Այս ամենի արդյունքում երկրում սկսվեց համատարած սով, որը հարյուր հազարավոր մարդկանց կյանքեր խլեց:

Ինչպես նշվեց վերը, միայն 1639 թվականի պայմանագրով Օսմանյան տերության և Սեֆյան Պարսկաստանի միջև հաստատվեց խաղաղություն: Կողմերը սկսեցին բուժել իրենց վերքերը՝ վերականգնելով շեներն ու ավանները, գյուղատնտեսությունն ու արհեստները, ճանապարհներն ու առևտուրը: Կայունացավ պետական կառավարման համակարգը: Այս ամենը Հայաստանի երկու հատվածներում ստեղծեց փոքրիշատե տանելի պայ-

18 Slevin **Blow D.**, Shah Abbas: The Ruthless King Who Became an Iranian Legend, London: I.B. Tauris & Co Ltd., 2009, p. 76.

19 **Babaie S., Babayan K., Baghdiantz-McCabe I., Farhad M.**, Slaves of the Shah, p. 50.

20 52. **Առաքել Դավրիժեցի**, նշվ. աշխ., էջ



մաններ, որոնք շուտով իրենց ազդեցությունն ունեցան ազգային կյանքի տարբեր կողմերի վրա<sup>21</sup>:

**Տնտեսական ռիթմը:** Արդեն նշեցինք, որ XVI դարի սկզբից մինչև XVIII դարի 40-ական թվականները Հայաստանը տնտեսապես կաթվածահար վիճակում էր<sup>22</sup>: Օսմանյան տերության և Սեֆյան Պարսկաստանի հակամարտությանն անդրադառնալով՝ անգլիացի ծովագնաց Ա. Ջենկինսոնը դրանք որակում է «իբրև բախումներ՝ առևտրական ուղիներին և մետաքսին տիրելու համար»<sup>23</sup>: Դա զուրկ չէ ճշմարտությունից: Ըստ երևույթին, պատերազմական գործողությունների հետևանքով երկրի ընդհանուր ավերվածությունը, օսմանցիների տարածումը Անդրկովկասում բացասաբար էին անդրադառնում տնտեսության և առևտրի զարգացման վրա: Խափանվել էին Պոլիս – Թոլսատ – Էրզրում – Թավրիզ, Ջնյուռնիա – Թոլսատ – Էրզրում-Թավրիզ, Տրապիզոն – Էրզրում – Թավրիզ հիմնական առևտրական ուղիները<sup>24</sup>:

Ինչպես նշեցինք, Շահ Աբբասը 1604 թվականին ձեռնարկեց հայերի բռնագաղթը: Մայրաքաղաք Սպահանից ոչ հեռու հիմնվեց Նոր Ջուղան, որը շուտով ոչ միայն Պարսկաստանի, այլև ողջ հայության համար վերածվելու էր տնտեսական, քաղաքական և մշակութային կարևոր կենտրոններից մեկի<sup>25</sup>: Պարսկական կողմը որոշել էր մետաքսի քարավանային ճանապարհը տեղափոխել դեպի հարավ, որպեսզի գրկի Օսմանյան տերությանն առեղի եկամուտներից: Այս քայլին նրանց հատկապես դրդել էր 1590 թվականի օսմանապարսկական հերթական պայմանագիրը: Հին Ջուղան անցել էր Օսմանյան տերության տիրապետության տակ, և Պարսկաստանը գրկվել էր տեղի առևտրական կապիտալին իր շահերի համար օգտագործելու հնարավորությունից<sup>26</sup>, ուստի 1604 թվականին Անդրկովկասից Պարսկաստան նահանջելիս Շահ Աբբասը չէր կարող Հին Ջուղան թողնել հակառակորդին: Նա որոշեց ոչ միայն քանդել ու ամայացնել այս քաղաքն ու հարակից տարածքը, այլև հայ խոջաներին ու բնակչությունը տեղափոխել Պարսկաստան:

Կրկնենք՝ Շահ Աբբասի նպատակն էր միջազգային առևտրի կենտրոնը տեղափոխել Պարսկաստան և մետաքսի քարավանային ուղիներն անցկացնել երկրի մայրաքաղաք Սպահանով դեպի Պարսից ծոց<sup>27</sup>: Այս քաղաքականության իրագործման համար պարսկական արքունիքը սկսեց ակտիվ օգտագործել հայ առևտրականների ներուժը՝ տալով նրանց մեծ

21 Տե՛ս Հովհաննիսյան Ա. Գ., Փափագյան Հ. Գ., Ազատագրական կռիվները Սյունիքում, Հայ ժողովրդի պատմություն, հատ. IV, Եր., 1972, էջ 172-173:

22 Տե՛ս Զուլայան Մ. Կ., Զալալիների շարժումը, էջ 113; Փափագյան Հ. Գ., Արևելյան Հայաստանը Կլբբաշների տիրապետության տակ, ՀԺՊ, էջ 249:

23 Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հատ. Ա, Եր., 1932, էջ 378: Տեղին է Մ. Կ. Զուլայանի այն դիտողությունը, թե սխալ կլիներ գերագնահատել Հայկական բարձրավանդակի ծագմաստրատեգիական կամ առևտրի ուղիների տիրապետման նշանակությունը՝ որպես պատերազմների հիմնական ու միակ գրգռիչ հանգամանքի»: Զուլայան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 1980, էջ 26-27:

24 Տե՛ս Զուլայան Մ. Կ., Զալալիների շարժումը, էջ 38:

25 Տե՛ս Լեո, Խոջայական կապիտալը և նրա հասարակական դերը հայերի մեջ, Եր., 1934, էջ 66:

26 Ուշագրավ է, որ «աշխարհ-տնտեսության» կենտրոնի գործառույթ կարող էր ստանձնել (կամ էլ ստանձնել էր) Հին Ջուղան, եթե 1604 թ. Շահ-Աբբասը չկազմակերպեր հայոց մեծ բռնագաղթը: Տե՛ս Հովհաննիսյան Ս., Նախաարդյունաբերական դարաշրջանի հայ առևտրականությունը քաղաքակրթական ընտրության առջև, Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 459-470:

27 Տե՛ս Babaie S., Babayan K., Baghdiantz-McCabe I., Farhad M., Op. cit., pp. 61-62.

արտոնություններ:

Իր հիմնադրման առաջին իսկ օրերից Նոր Զուղան Շահ Աբբասից ստանում է մի շարք իրավունքներ ու արտոնություններ: Մասնավորապես՝ հայ խոջաները, որոնք կազմում էին Պարսկաստանի առևտրական ընտրանին, ձեռք են բերում ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական և իրավական բնույթի մի շարք առանձնաշնորհումներ՝ դրանք պահպանելու և զարգացնելու իրավունքով<sup>28</sup>: Շահ Աբբասը նրանց շնորհում է շահապատկան ապրանքները վաճառող «խասսե-յե շարիֆե» առևտրականի կոչում, ազատ քաղաքացիություն և քրիստոնեական կրոնը ազատորեն դավանելու իրավունք: Նոր Զուղային տրամադրվում էր նաև ինքնավարություն, այդ թվում՝ առանց պարսկական կողմի միջամտության քալանթարի (քաղաքագլխի) ընտրության իրավունք: Շահ Աբբասը հրապարակում է նաև մի շարք ֆիրմաններ (հատուկ հրամանագրեր), որոնք նորջուղայեցիներին պաշտպանում էին տեղական իշխանությունների հալածանքներից: Տնտեսական քաղաքականության շրջանակներում տրված արտոնությունների շարքում կարևոր էր հարկային լծի թեթևացումը: Իսկ մետաքսի և պարսկական այլ ապրանքների արտահանումն ու վաճառքն ապահովելու համար շահն ամեն կերպ խրախուսում էր հայ առևտրականներին, մասնավորապես նրանց՝ նոր և ազատ շուկաներ հայտնաբերելու ջանքերը:

Պատահական չէր, որ Լևանտյան առևտրում սկսեց շեշտակի աճել հայ առևտրականների մասնակցությունը<sup>29</sup>: Դրան նպաստեցին նաև բազում հայկական գաղթավայրերը, որոնք գտնվում էին տարանցիկ առևտրի կարևորագույն հանգրվաններում:

Հարկ է նշել, որ այս ամենին զուգահեռ դժվարացել էր առևտրական քարավանների երթևեկությունը Օսմանյան տերության տարածքով, ինչը ծայրահեղորեն դանդաղեցնում էր առևտրական փոխհարաբերությունները: Ուստի հայ առևտրականները նաև օսմանյան առևտրական ճանապարհների պաշտպանության համակարգի կազմակերպման և առևտրի իրականացման գործում ակտիվ դերակատարություն ստանձնեցին: Նրանք մասնավորապես ոգևորված էին 1612 թվականին Օսմանյան տերության և Հոլանդիայի միջև կնքված առևտրական պայմանագրով: Այն հնարավորություն էր տալիս երկու երկրների առևտրականներին ազատ առևտուր անել<sup>30</sup>: Թուրքական սկզբնաղբյուրները վկայում են, որ տերության շատ վայրերում (օրինակ՝ Հայկական Տավրոսում) առևտրական ճանապարհների հսկողությունը վստահված էր տեղացի հայ հսկիչներին: Ինչպես նշում է Վ. Փափագյանը, «կարելի է ենթադրել, որ սա բացառություն չէր, և Հայաստանի տարածքում և հայաբնակ այլ շրջաններում նույնպես ճանապարհների հսկողությունը իրականացնում էին հայ հսկիչները»<sup>31</sup>:

**Քաղաքակրթական ոլորտ:** Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր քաղաքակրթություն մյուսներից տարբերվում է բազմաթիվ չափոյթներով՝ էթնիկ-լեզվական, քաղաքական, տնտեսական, ընկերային, մշակութային,

28 Տե՛ս **Aslanian S. D.**, op. cit., p. 31.

29 Տե՛ս **Դանեղյան Լ. Գ.**, Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. IV, եր., 1969, էջ 71:

30 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Նշվ. աշխ., հատ. Բ, էջ 405:

31 **Փափագյան Վ.**, Հայաստանի առևտրական ուղիները, էջ 100:


արժեքային և այլն<sup>32</sup>: Սակայն տարբերությունները միշտ չէ, որ հանգեցնում են բախումների: Նույնքան հավանական է նրանց երկխոսությունը: Այդպես տեղի ունեցավ նաև օսմանապարսկական հարաբերություններում՝ 1639 թվականի խաղաղության դաշնագրից հետո: Արևմուտքի երկրներում տնտեսական վերելք էր սկսվել, և նրանք Արևելքից եկող հումքի մեծ կարիք ունեին՝ մետաքս, բամբակ, համեմունք և այլն: Ուստի երեկվա անհաշտ հակառակորդներն աստիճանաբար եկան փոխզիջման: Եվ քարավանային առևտուրը կրկին աշխուժացավ:

Այսպիսով, Արևելքի և Արևմուտքի միջև միջնորդ առևտրականների դերակատարությունը դառնում էր հույժ կենսական: Դա մեծավ մասամբ իրենց վրա վերցրին հայ, հրեա և հույն առևտրականները: Հայ առևտրականների դեպքում դա բացատրվում է այն իրողությամբ, որ նրանք, ի տարբերություն շիա պարսիկների, անհամեմատ ավելի հանդուրժողական վերաբերմունքի էին արժանանում թե՛ Օսմանյան տերության տարածքում և թե՛ Եվրոպայում: Շահ Աբբասը, ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենի բնորոշմամբ՝ «այդ հայերին բերեց իր մայրաքաղաքը որպես հպատակներ, որոնք բոլորից լավ էին հարմարված առևտուր անելու ինչպես օսմանցիների, այնպես էլ քրիստոնյաների հետ, քանի որ առաջինները նրանց առում էին ոչ այնքան, որքան պարսիկներին, իսկ երկրորդները նրանց դավանակիցներն էին»<sup>33</sup>:

Այս ամենը քաղաքակրթությունների տնտեսական երկխոսության հնարավորություն ստեղծեց, որի միջնորդ-կապավորների թվում կարևոր դերակատարում ունեին հայ առևտրականները<sup>34</sup> (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1.

Հայ առևտրական կապիտալի համար ստեղծված նպաստավոր պայմանների բաղաբաղրական, տնտեսական և քաղաքական համընկնումները:



Համադրումը կատարվել է ըստ XVII-XVIII դդ. սկզբնաղբյուրների տվյալների:

32 Տե՛ս Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 108:

33 Sir John Chardin's Travels in Persia, Publisher: Cosimo, Inc., 2010, p. 139.

34 Տե՛ս Braudel F., The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II, Volume I, Translated from the French by Siân Reynolds, New York: Harper & Row, 1972, p. 728.

Վերողիտարկյալ բոլոր երեք ռիթմերը՝ քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական, սկսեցին ժամանակի ընթացքում ակտիվորեն համահարաբերակցվել, և դա 1610-ական թվականներից ստեղծեց նպաստավոր պայմաններ Արևելք-Արևմուտք կապերի ակտիվացման համար<sup>35</sup>:

Հայ առևտրականներն անմիջապես լայն գործունեություն ծավալեցին ամենատարբեր երկրների և ժողովուրդների հետ: Ըստ Գրիգոր Դարանադցու վկայության՝ նրանք լինում էին «ընդ ամենայն յերեսս երկրի», «ի Հնդիկս ներքինս, և յԵթովպիա, և յԵգիպտոս, և յամենայն աշխարհս Ֆռանգաց, և ի Կոստանդինուպոլիսս, և յամենայն աշխարհն Թրակացոց և Մոսկոֆայ և Վրկանաց և ընդ ամենայն աշխարհն Թուրքաց և Քրդաց Քաղդեացոց և յամենայն Պարսկաստանաց, և արևելայս՝ մինչև ի Չին և Մաոչինն, ի Թօնն և Թօնձան և յԱնգալիան, և յամենայն աշխարհքն Տաթարաց և Ափխազաց, մինչև ի ծագս աշխարհաց անձանօթից»<sup>36</sup>: Հայ առևտրական կապիտալի ծավալման աշխարհագրական սահմանների ավելի մանրամասն թվարկումը գտնում ենք Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովում»: Թվարկված երկրներից և քաղաքներից էին Իրանը, Անդրկովկասը, Միջին Ասիան (Բալ և Բուխրա կամ «Էօզպեկստան»), Աֆղանստանը (Ղանդահար, Ղազնի, Բարու), Հնդկաստանը (Փեշավար, Քաշմիր և այլն), Արաբիան կամ «Արաբստան» (Բասրա, Բաղդադ, Հալեպ, Մոսուլ), Հաբեշստան: Օսմանյան տերության հաճախ հիշատակվող քաղաքներից էին՝ Կոստանդնուպոլիսը, Բուրսան, Ատրանան (Ադանան), Իզմիրը (Ջմյուռնիան), Թոխաթը, Արզրումը (Կարինը) և այլն: Եվրոպական կենտրոններից՝ Ալիկոռնան (Լիվոռնո), Վենետիկը, Ջենովան, Մեսինան, Մարսելը, Ամստերդամը, Դանձիգը, Մոսկվան: Իսկ երկրներից՝ Ֆրանկրստանը (Ֆրանսիա), Ընկլեթեռը (Անգլիա), Ալամանը (Գերմանիա), Սպանիան, Լեհաստանը, Մաջարստանը (Հունգարիան): Անգամ հիշատակություն կա Նոր Աշխարհի (Ենգի Դունիա), այն է՝ Ամերիկա մայրցամաքի մասին<sup>37</sup>: Այսպիսով՝ հայ առևտրականների գործունեությունն ընդգրկում էր գրեթե ողջ աշխարհը<sup>38</sup>:

Միջազգային առևտրում հայերի դերակատարման նման զարգացումները նկատի ունեն գերմանացի իմաստասեր Իմանուել Կանտը, երբ գրում էր. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է ինչ-որ առանձնահատուկ բնույթի առևտրական ոգի: Նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսո հրվանդանը: Դա վկայում է այդ խելամիտ ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտքի ուղղությամբ հատանցում է գրեթե ողջ հին աշխարհը և կարողանում է սիրալիք ընդունելության արժանանալ այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց այցելում է»<sup>39</sup>:

35 Տե՛ս Zekian L. P., The Armenian Way to Modernity, Venezia, 1997, p. 39–40.

36 Գրիգոր Դարանադցի, նշվ. աշխ., էջ 457–458:

37 Տե՛ս Կոստանդ Ջուղայեցի, Վասն նորահաս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5994, էջ 3ա–3բ:

38 Տե՛ս Տէր-Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հատ. Բ., ի Նոր Ջուղա, 1880, էջ 159–160:

39 Kant Im., Anthropologie in Pragmatischer Hinsicht (Philosophische Bibliothek; 490), Hamburg: Felix Meiner Verlag, 2000, p. 255 (Unter einem anderen christlichen Volk, den Armenianern, herrscht ein gewisser Handelsgeist von besonderer Art, nämlich durch Fusswanderungen von China's Grenzen aus bis nach Gap

Ակնհայտ է, որ հայ առևտրականների գործունեությունն անհնար է պատկերացնել առանց այնպիսի փորձառնությունների, որպիսիք են գրագրությունը, հաշվառումը և հաշվարկը: Ինչպես նկատում է Անրի Պիռենը, կարելի է «համարձակորեն հավաստել, որ կրթությունը բարեշրջվում է առևտրի զարգացման հետ միաժամանակ»<sup>40</sup>: Հիրավի, XVII դարի սկզբներին գիտության և մշակույթի ծիրում սկիզբ է առնում «վերանորոգչական» մի շարժում, որն առաջին հերթին իր արտահայտությունն է գտնում դպրոցական կյանքում<sup>41</sup>: Ժամանակի ոգուն համապատասխան դպրոցները պետք է բավարարեին ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ դասի և ամենից առաջ հայ առևտրականության մտավոր և գործնական պահանջները:

Այս իրողությունը հրատապ էր նաև հայկական միջավայրում: Միջնադարյան ավանդական գիտելիքների հետ մեկտեղ հայոց դպրոցներում դասավանդվում էին ճշգրիտ գիտություններ՝ աշխարհագրություն, աստղաբաշխություն, բժշկություն, մաթեմատիկա և այլն: Անգամ հաշվի էին առնում այդ բնագավառների նորագույն նվաճումները<sup>42</sup>:

Հույժ անհրաժեշտ էր դարձել, որ ասպարեզ մտնելու և կենսակայելու համար հայ առևտրականները ձեռք բերեին մասնագիտական գիտելիքներ և ունենային համապատասխան կրթական հաստատություններ<sup>43</sup>: Ստույգ տեղեկություններ ունենք, որ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքին կից Խաչատուր Կեսարացու բացած դպրոցում աշակերտներին տրվում էին առևտրական կյանքին վերաբերող զանազան գիտելիքներ<sup>44</sup>: Առևտրական դպրոցը բացվել է դեռ Կոստանդ Զուղայեցու ջանքերով, որն իր գործունեության ընթացքում տվել է գրեթե 250 շրջանավարտ: Այդ հաստատությունում ապագա առևտրականներին սովորեցնում էին «թվաբանություն, հասարակ ընթերցողություն, գրագրություն և ըստ մեծի մասին խրատ յաղագս վաճառականություն»<sup>45</sup>:

Արդ հայ առևտրականների գործունեությունը հեշտացնելու համար անհրաժեշտ էին տեղեկատուներ, ուղեցույցներ և քարտեզներ: Այդ նպատակով Կոստանդ Զուղայեցին 1685 թվականին կազմել է մի ժողովածու՝ դասագիրք, որը հայտնի է «Աշխարհաժողով» կամ «Վասն նորահաս մանկանց և երիտասարդ վաճառականաց խրատ» անվամբ<sup>46</sup>: Այն թվաբանական մի ուշագրավ ձեռնարկ է՝ առևտրականներին հասցեագրված հաշվապահական խրատներով: Կոստանդ Զուղայեցին ձեռնարկի միջոցով նպատակ ուներ լայն պատկերացումներ տալ տարբեր երկրների չափերի ու կշիռների, դրամական միավորների, արտահանվող և ներմուծվող ապրանքների, մաքսային քաղաքականության և այլ խնդիրների մասին: Միով բանիվ՝ նպատակն էր ամենամանրակրկիտ տեղեկություններ հաղորդել

– Corso an der Guineaküste Verkehr zu treiben, der auf einen besonderen Abstamm dieses vernünftigen und emsigen Volks, welcher, in einer Linie von Nordost nach Südwest, beinahe die ganze Strecke des alten Kontinents durchzieht und sich friedfertige Begegnung unter allen Völkern, auf die es trifft, zu verschaffen weiss.  
40 Pirene H., L'Instruction des Marchands au Moyen Âge, Annales, 1 (1929), p. 13.

41 Տե՛ս Միրզոյան Հ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Ե., 1983, էջ 62:

42 Տե՛ս Անդ:

43 Տե՛ս Խաչիկյան Լ., Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետու մարը, Եր., 1984, էջ 13:

44 Տե՛ս Տեր-Յովհաննես Զ., նշվ. աշխ., հատ. Բ, էջ 253.

45 Անդ:

46 Մ. Մաշտոցի անվան մատենադարան № 10704, կամ № 8443, կամ № 5995:

Արևելքի և Արևմուտքի միջև իրականացվող առևտրական գործունեության մասին: Ավելին, դեռ 1675 թվականին Ոսկան Երևանցու հիմնադրած տպարանում հրատարակվում է «Արիեստ համարողությանց» աշխատությունը՝ հայերեն առաջին տպագիր մաթեմատիկական ձեռնարկը<sup>47</sup>: Այս թվաբանական-հաշվողական ձեռնարկը թարգմանված էր իտալերենից և գրված ժողովրդին հասկանալի լեզվով և երկար ժամանակ գործածական էր հայ առևտրականների համար:

Այս առումով հաջորդ նշանակալի քայլն են իրականացնում նաև վանանդեցիները: Նրանք ծագում էին Նախիջևանի Գողթն գավառի Վանանդ գյուղից: Վանանդեցիներից նախ Մատթեոսն է Եվրոպա մեկնում՝ Ոսկան Երևանցու տպարանում գրաշարություն սովորելու նպատակով<sup>48</sup>: Իսկ Ոսկան Երևանցու մահից հետո տպարանն անցնում է նրա տնօրինության տակ: Այա Մատթեոսին միանում է Ղուկասը, ով արդեն հասցրել էր ուսանել Հռոմում: Նա Ամատերդամ է ժամանում արդեն զանազան լեզուների, փիլիսոփայության, աստվածաբանության, աշխարհագրության, տրամաբանության, քարտեզագրության և բնական այլ գիտությունների ասպարեզում հմտացած: Ժառանգելով տպարանը՝ նրանք անմիջապես անցնում են հայ գրականության մնայուն արժեքների հրատարակության գործին: Նպատակն էր «վեր հանել ազգի փառավոր անցյալը, նրա մշակութային գոհարները»<sup>49</sup>: Վանանդեցիների հրատարակչական գործունեության նվաճումներից էր Աստվածաշնչի՝ որպես «թարգմանությունների թագուհու» շքեղ, նկարազարդ հրատարակությունը: Այնուհետև հրատարակվում են Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը», Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը», Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և այլ գործեր:

Այս համաշարում մասնավորապես հիշատակելի է նրանց կազմած և հրատարակած «Համատարած աշխարհացույց» (առաջին հայերեն տպագիր քարտեզը), «Բանալի համատարածի աշխարհացուցին նորածնի» և «Գանձ չափոյ, կշռոյ, թվոյ և դրամից բոլոր աշխարհի» աշխատությունները: Դրանք իրենց աշխարհագրական ձգբրտությամբ և առևտրական հարաբերությունների մանրամասներով «լավ նվեր էին հայ առևտրականների համար»<sup>50</sup>: Ընդամին՝ այս ամենը նախատեսված էր Թովմաս Վանանդեցու կողմից Հայաստանում հիմնադրվելիք կրթօջախի ապագա ուսանողների համար:

Ուշագրավ է, որ դրանցից առաջին երկուսը (բազմաթիվ ձգբրտ քարտեզների և գիտական նորությունների շնորհիվ) կիրարկություն են գտնում ոչ միայն հայ, այլև օտարազգի առևտրականների միջավայրում: Հաջորդը՝ «Գանձ չափոյ, կշռոյ, թվոյ և դրամից բոլոր աշխարհի» գիրքը, կազմված էր ըստ Կ. Ջուղայեցու «Աշխարհաժողով» երկի, սակայն վերանայված, ձգբրտված և թարմացված: Ղուկաս Վանանդեցին իր այս գիրքը հրապա-

47 Տե՛ս Թաշիրյան Է. Խ., Հնդկահայ գաղութը և հայ ազատագրական միտքը (XVII դ.), «XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը», Ե., 1989, էջ 127:

48 Տե՛ս Ալիշան Ղ., Միտումն: Համագրություն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1885, էջ 340:

49 Թաշիրյան Է. Խ., նշվ. աշխ., էջ 121-122:

50 Անդ:

րակում է՝ նպատակավ «ի յօգուտ մերագնեայ վաճառասէր եղբարց»<sup>51</sup>: Նա դա իրականացնում է հարցադրումների և մի շարք աղբյուրների համադրությամբ. «ստիպեալ մանասանդ ի խնդրոյ Ջուղայեցի բարեպաշտ Պարոն Պետրոսի»<sup>52</sup>:

Այս աշխատությունը, բացի XVII դարի առևտրական հարաբերությունների, առանձին երկրների չափային, կշռային և դրամական միավորների և նրանց հարաբերակցության մասին իրազեկելուց, բավականին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև տարբեր տարածաշրջանների էթնիկ կազմի, սովորույթների, ազգային լեզուների ու կրոնների մասին՝ հիշեցնելով հույն լոգոգրաֆների գործերը: Գրքում անգամ նշվում են այն երկրներն ու շուկաները, որտեղ հայ առևտրականները կարող էին եկամտաբեր առևտուր ծավալել, և որտեղ Պարսկաստանից ու Թուրքիայից ներկրված ապրանքները մեծ պահանջարկ ունեին: Ի հավելումն այս ամենի՝ գրքի վերջում զետեղված է թվաքանակային խնդիրների մի փոքրիկ հավաքածու՝ առևտրականների մտավոր ունակությունները զարգացնելու նպատակով: Անտարակոյս, թե՛ Կ. Ջուղայեցու և թե՛ Ղ. Վանանդեցու կազմած այս դասագիրք-ձեռնարկները նպաստում և դյուրացնում էին հայ առևտրականների գործունեությունը Եվրոպայի և Արևելքի երկրներում:

Հայ առևտրականների դերի, առևտրատնտեսական հարաբերությունների կազմակերպվածության խոսույն վկայություններից են նրանց կողմից կազմված ելումուտային գրքերը (հաշվեմատյանները), որոնցից հիշատակելի է Տեր Դավթի որդի Հովհաննես Ջուղայեցու 1682-1693 թվականներին Պարսկաստանում, Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում գրված «Հաշվետումարը»<sup>53</sup>: Այն արժեքավոր տեղեկություններ է պարունակում ոչ միայն Հովհաննես Ջուղայեցու դեգերումների ուղեգծի, այլև նրա այցելած երկրների, մասնավորապես Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի մասին: Այն ուշագրավ է նաև ջուղայահայ կապիտալի ներկայացուցիչների հաշվապահական գիտելիքների, թվերի ու կոտորակների գրանցման եղանակների իրազեկման դիտանկյունից: Առանձնակի կարևորություն ունեն տնտեսական կյանքի պատմության և հեռավոր արևելյան երկրների հետ հայերի ունեցած պատմատնտեսական կապերի վերաբերյալ տեղեկությունները<sup>54</sup>:

Այսու՝ XVI-XVII դարերում ձևավորված հայ առևտրական կապիտալը, լինելով քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական ռիթմերի պատահակցության արդյունք, կանգնած էր սեփական (լոկալ) ռիթմը համաշխարհային (գլոբալ) ռիթմի հետ համահարաբերակցելու և համադրելու քաղաքակրթական խնդրի առջև: Խնդիր, որն արդեն լուծելի էր «պատահակցություններից» դուրս՝ բանական «պատահակցությունների» ծիրում, պահանջում էր հոգեմտավոր ճիգ ու ջանք: Հատկապես, երբ նկատի ունենանք, որ 1700-ական թվականներին հայ առևտրական կապիտալի ճգնաժամը համընկնում էր նաև քաղաքակրթական միջին տևողության և երկար տևողության ճգնաժամերի հետ (տե՛ս Գծապատկեր 2: Գծապատկերը՝ ըստ Բ.


51 **Ղուկաս Վանանդեցի**, Գանձ չափոյ, կշռոյ, թվոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 3:

52 **Անդ**:

53 Տե՛ս **Հովհաննես Տեր-Դավթյան** Ջուղայեցու հաշվետումարը, Եր., 1984:

54 Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 9-10:

Շրջափուլերի և ճգնաժամերի փոխներգործությունը



Ինչպես ցույց տվեց հետագա պատմությունը, այդ հիմնարար խնդիրը չլուծվեց: Եվ պատճառները կրկին խոր քաղաքակրթական բնույթ ունեին, զի «նորարարական պլիքներին» նախորդել էր «զարգացման ներունակությունը մեծավնասամբ սպառած քաղաքակրթության ճգնաժամային վիճակը»<sup>56</sup>:

## 2. Հայ առևտրական կապիտալն իբրև «աշխարհ-տնտեսություն»

Ինչպես գիտենք, Նոր ժամանակների արշալույսին (XVI–XVII դդ.) տեղի ունեցավ հերթական «քաղաքակրթական հերթափոխությունը». Նախաարդյունաբերական քաղաքակրթությունն իր տեղը զիջեց Արդյունաբերականին: Արդյունքում աստիճանաբար փոխվեց Արևմուտքի և Արևելքի միջև դարեր ի վեր ընթացող առևտրի և ապրանքափոխականության բովանդակությունն ու կառույցը: Ընդ որում՝ հասարակական կյանքի տարբեր մակարդակներում անցումն ուղեկցվեց խորագույն տեղաշարժերով<sup>57</sup>:

Հարաձուռն տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի հետևանքով մարդկության կյանքում կարևորվեց «աշխարհի ժամանակը, որը պատմության վերնաշերտն է»<sup>58</sup>: Այս հիմնարար հասկացությունից բրոդելն արտածել է «**համաշխարհային տնտեսություն**» և «**աշխարհ-տնտեսություն**» հղացքները: Թեպետ վերջիններս իրար բավական մոտ են, սակայն ունեն էական տարբերություններ: Ի մասնավորի՝ «Համաշ-

55 Стэн Кузык Б. Н., Яковец Ю. В., Цивилизации: Теория, история, диалог, будущее, Том 5, Цивилизации: прошлое и будущее, М.: Институт экономических стратегий, 2008, с. 48, 50.

56 Стэн Кузык Б. Н., Яковец Ю. В., Цивилизации: Теория, история, диалог, будущее, Том 1, Теория и история цивилизаций, М.: Институт экономических стратегий, 2008, с. 150.

57 Стэн Braudel F., Grammaire des civilisations, Paris: Armand Colin, 1993, pp. 413–414.

58 Braudel F., Civilization and capitalism, 15th–18th century. Vol. 3, The perspective of the world. Trans. Siân Reynolds, New York: Harper and Row, 1984, p. 18.



խարհային տնտեսությունը ծավալվում է աշխարհով մեկ, մինչդեռ աշխարհ-տնտեսությունը՝ նրա մի հատվածում միայն»<sup>59</sup>: «Աշխարհի Ժամանակ», «աշխարհ-տնտեսություն», «համընդգրկուն պատմություն» հղացքների իմաստային դաշտերի համադրմամբ Բրոդելը լուսաբանում է «համընդգրկուն պատմության» բովանդակությունը:

Արդ այս հիմնարար հասկացությունների ծիրում էլ փորձենք մեկնաբանել հայ առևտրական կապիտալի դերակատարությունը նորդարյա Արևելք-Արևմուտք հարաբերությունների մեջ: Նպատակին հետամուտ՝ վերջինս առաջարկում ենք բանաձևել իբրև «աշխարհ-տնտեսություն», որին ներհատուկ էին հետևյալ բաղադրիչները.

- կոնկրետ աշխարհագրական տարածք և հաղորդակցական (սահմանային) ուղիներ, որոնք դանդաղ, բայց անընդհատ փոփոխվում էին,

- կենտրոնի առկայություն, որից եկող ուժային խթանով կարգավորվում էին տնտեսական և այլ գործարքները,

- տարածքային գոտիների հստակ սահմանագծում և դրանց միջև փոխլրացման (կամ աստիճանակարգային) հարաբերությունների առկայություն<sup>60</sup>:

Փորձենք մանրամասնել հայ առևտրական կապիտալի ֆենոմենը որպես «աշխարհ-տնտեսություն» համակարգ՝ ըստ նրա վերոհիշյալ բաղադրիչների:

**Աշխարհագրական տարածքը և հաղորդակցական ուղիները:** Այն ընդգրկում էր մի առեղծվածի էթնոքաղաքական համալիր՝ «սկսած Ֆիլիպիններից, Չինաստանից, Հնդկաստանից, Իրաքից, Օսմանյան տերությունից մինչև Եվրոպա (Մոսկովյան Ռուսիա, Լեհաստան, Շվեդիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Իտալիա, Անգլիա): Ընդհուպ մինչև՝ Ամերիկայի նախադռները»<sup>61</sup>: Կենտրոնում պատմական Հայաստանն էր՝ ընկած Իրանի և Օսմանյան տերության տիրապետության ներքո: Խնդրին Բրոդելի դիտանկյունից մոտենալու դեպքում ակնհայտ է դառնում, որ հայ առևտրականությունը մի ամբողջական աշխարհ-տնտեսություն էր ներկայացնում, որը հատանցելով միմյանց էր շաղկապում այլազան «աշխարհ-տնտեսություններ» և տարբեր պետական միավորներ: Այս համատեքստում՝ Եվրոպայի երկրների հետ ապրանքափոխանակության իրականացման կարևորագույն երակները Թավրիզ-Էրզրում-Թոխաթ-Պոլիս, Թավրիզ-Էրզրում-Թոխաթ-Զմյուռնիա, Թավրիզ-Էրզրում-Տրապիզոն միջազգային տարանցիկ մայրուղիներն էին<sup>62</sup>:

Միջազգային առևտրի մյուս կարևորագույն ուղղությունը Պարսից ծոցից դեպի Հնդկական օվկիանոս տանող ուղին էր: Այն ձգվում էր Սպահան-Մահեստ-Եգիպտոս-Շիրազ-Լառ-Բանդեր-Աբբաս քարավանային ճանապարհով<sup>63</sup>: Պարսկահնդկական ծովային առևտրի հիմնական կենտրոնները Պարսից ծոցի Բանդեր-Աբբաս, Բանդեր-Բաշիր, Բասրա, ինչպես նաև Հնդկաստանի արևմտյան ծովափին գտնվող Սուրաթ նավահանգիստներն

59 Ibid., p. 22.

60 Braudel F., La dynamique du capitalisme, Coll. Champs, éd. Flammarion, 1988, pp. 85-86.

61 Braudel F., Civilization and capitalism, 15th-18th century. Vol. 2, The Wheels of Commerce. Translated by Sian Reynolds, New York: Harper and Row, 1984, p. 156.

62 Տե՛ս Զուլայան Մ. Կ., Ջալալիների շարժումը, էջ 38:

63 Տե՛ս Բաբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը, էջ 210:

էին<sup>64</sup>: Հայ առևտրականները ծովային ճանապարհի փոխարեն գերադասում էին Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհը: Այն անցնում էր Կասպից ծովով դեպի Խորասան, ապա՝ Ղանդահար ու Քաբուլ, այնուհետև՝ Դելի<sup>65</sup>: Առևտրականները, սակայն, չէին սահմանափակվում Հնդկաստանով: Հնդկաստանի վրայով նրանց երթուղին անցնում էր դեպի Բիրմա, Սիամ, Նեպալ, Տիբեթ, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Մալայան արշիպելագ և բազմաթիվ այլ երկրներ<sup>66</sup>: XVI դարի երկրորդ կեսից Արևելք-Արևմուտք առևտրի իրականացման համար ակտիվանում է Վոլգա-Կասպյան նոր ուղին<sup>67</sup>: Այս ուղին Օսմանյան տերության ցամաքային տարանցիկ ուղու համեմատ շատ ավելի կարճ էր, բայց զարգացման միտումներ է ցուցաբերում XVIII դարի սկզբին:

**Աշխարհագրական կենտրոնը:** Արդեն բազմիցս նշել ենք, որ սկսած XVII դարի սկզբից՝ նման դերակատարությունը ստանձնել էր Նոր Զուղան: Շահ Աբբասի նախաձեռնությամբ և հովանավորությամբ այն վերածվում է հայ առևտրական կապիտալի ամենամեծ և ամենանշանավոր կենտրոնի. «Հին Զուղայի կատարյալ կերպարանափոխությունն էր, և հենց դրանով մարմնավորում էր այն դերը, որը նա պիտի կատարեր հայ կյանքի վերաբերմամբ, դառնալով, ինչպես արդեն դարձել էր առևտրական կապիտալը Եվրոպայի շատ տեղերում, մի հուժկու գործոն, որ հանում էր մարդկությանը միջին դարերից դեպի նոր ժամանակները»<sup>68</sup>: Միաժամանակ՝ «մի տեսակ պատճառ էր դառնում, որ ավելի գործուն, ավելի միջազգային դառնար Արաքսի հովտի մյուս գյուղերում ամփոփված խոջայական կապիտալը»<sup>69</sup>:

1605 թվականի հատուկ հրովարտակով Շահ Աբբասը Սպահանի հարավային մասում՝ Զանդեղերուդ գետի աջ ափին, շահապատկան «խասսե» հողերից ջուղայեցիներին հատկացնում է մի ընդարձակ տարածք: Այստեղ էլ կառուցվում է նոր բնակավայրը, որն ի հիշատակ ավերված Զուղայի՝ ստանում է Նոր Զուղա անվանումը<sup>70</sup>: Հայերը Նոր Զուղան կառուցում են ըստ առանձին հայրենակցական միությունների (Զուղայեցիների, Երևանցիների, Դաշտեցիների թաղամաս և այլն). «շինեցին շենքեր ու իրենց համար բնակարաններ՝ հրաշալի ձևավորումով, կոմպակտ փողոցներով, թևավոր ապարանքներով, հովասուն դստրիկոններով, բարձրաբերձ ու արքայավայել շինվածքներով, զարդարեցին ոսկյա և լաջվարդի պես երանգ ունեցող ծաղիկներով, որ տեսնողի աչքերը խողտում էին»<sup>71</sup>:

Շահագրգիռ լինելով Պարսկաստանի արտաքին առևտրի զարգացմամբ և այդ գործում ներգրավելով հայերին՝ Շահ Աբբասը, որպեսզի նրանց ավելի ամուր կապերով կապի Պարսկաստանի հետ, հղանում է Էջմիածնի «տեղափոխման» ծրագիրը: Ըստ այդմ՝ Էջմիածինը պետք է քանդվեր և

64 Տե՛ս **Seth M. J.**, *Armenians in India. From the Earliest Times to the Present Day*, Oxford, 1983, p. 290, 293.

65 Տե՛ս **Aslanyan S. D.**, *From the Indian Ocean to the Mediterranean, The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*. Berkeley–New York–London: University of California Press, 2011, p. 221

66 Տե՛ս *Ibid.*, p. 227.

67 Տե՛ս **Փափազյան Վ.**, *Հայաստանի առևտրական ուղիները*, էջ 80:

68 **Լեո**, Խոջայական կապիտալը և նրա հասարակական դերը հայերի մեջ, Եր., 1934, էջ 66:

69 **Անդ**, էջ 74:

70 Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, *Համաշխարհային առևտուրը*, էջ 42:

71 **Առաքել Դավրիժեցի**, նշվ. աշխ., էջ 60:

մաս-մաս տեղափոխվելը Սպահան, իսկ ապա վերականգնվելը որպես «Նոր Էջմիածին»: Այսպես Պարսկաստանի մայրաքաղաքը կդառնար և հայ Առաքելական եկեղեցու նստավայրը<sup>72</sup>: Թեպետ մտահղացումը չի իրականացվում, այնուամենայնիվ Նոր Ջուղա-կենտրոնից դեպի արևելք և արևմուտք տարածվող «ուժային խթանները» կազմակերպում, կարգավորում և ինչ-որ չափով նաև կառավարում էին միջազգային ցամաքային առևտրի հսկայական գարկերակը: Դրանք միտում ունեին ձևավորելու մեկ միասնական համակարգ, որի երկու հիմնարար բաղկացուցիչները՝ կենտրոնը և ծայրամասերը, սկսում էին գործառել ըստ համաձայնեցված ռիթմի:

Այս առումով ուշագրավ է և այն, որ 1616 թվականին տոմարագետ Ազարիա Ջուղայեցու կողմից կազմվել է 532-ամյա նոր պարբերաշրջանի տոմար, որը թեպետ կիրառվել է միայն Պարսկաստանի և Հնդկաստանի հայկական գաղութներում, այդուամենայնիվ իբրև քաղաքակրթական համաժամանակեցման փորձ՝ ևս մի վկայությունն է «Ջուղայեցիների ժամանակաշրջանի»<sup>73</sup>:

Այս իրողությունը չի վրիպել Բրոդելի ուշադրությունից և իր «Նյութական քաղաքակրթություն» հետազոտության մեջ նա առանձին մի բաժին՝ «Հայերը և հրեաները», նվիրել է հայ առևտրական կապիտալի ծավալմանը<sup>74</sup>: Մասնավորապես, երբ խոսքը «ազդեցության գոտիների» ձեռք բերման և վերաբաժանման է վերաբերվում. «Առևտրի և ցանցային կապերի շրջապատույտը գտնվում էր համացանցային խմբերի մշտական ճնշման և տիրապետության ներքո, ովքեր դրանք յուրացնում էին և, անհրաժեշտության դեպքում, թույլ չէին տալիս ուրիշներին օգտվել դրանցից»<sup>75</sup>: Սա էլ Բրոդելին թույլ էր տալիս եզրակացնել, որ հայ առևտրական կապիտալի ծավալումը կատարվում էր ավելի ձկուն և ընդգրկուն մի համակարգով:

**Աստիճանակարգային կառույցը:** Շարունակելով նախորդ միտքը՝ նշենք, որ Նոր Ջուղան առևտրատնտեսական և այլ կապերի մեջ էր աշխարհի տարբեր անկյուններում գտնվող հայ գաղթավայրերի հետ: Ուրվագծվում էր մի յուրօրինակ վերսահմանային ամբողջություն՝ ըստ հստակ աստիճանակարգի. «Ջուղան մի մեծ հեղինակություն դարձավ, և առանց նրա համաձայնության չէր կարող վճռվել ոչ մի նշանավոր ազգային գործ: Էջմիածինը ենթարկված էր նրան, կաթողիկոսի ընտրության փորձում առաջին ձայնը պատկանում էր Ջուղային»<sup>76</sup>:

Այս գերակայությունը ձևավորել էր կապերի մի համացանց, որը միավորում էր Սուրաթը, Մադրասը, Կալկաթան, Կոստանդնուպոլիսը, Աստրախանը, Մոսկվան, Կրակովը, Լվովը, Վենետիկը, Ամստերդամը և այլ կենտրոններ: Շրջանառվում էր հույժ պատկառելի ազգային կապիտալ:

72 Տե՛ս Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, էջ 47:

73 Բաղայան Հ. Ս., Օրացույցի պատմություն, Եր., Հայկական ՍՍԽ ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 107:

74 Տե՛ս Braudel F., Civilisation matérielle, économie et capitalisme, XVe-XVIIIe siècle, 2. Les jeux de l'échange, Paris, 1979, pp. 167-172: Հայերեն թարգմանությունը տես Ֆերնան Բրոդել, Հայերը և հրեաները, ֆրանսերենից թարգմ. Ս. Հովհաննիսյանը, «Պատմության հարցեր», 1, Խմբ.՝ Ա. Ստեփանյան, Ե., «Զանգակ-97» հրատարակչություն, 2009, էջ 193-198 (տես նաև URL:// <http://www.arteria.am/hy/1371732874>):

75 Ibid., p. 166.

76 Լեո, Երկերի ժողովածու, հատ. V, Եր., 1986, էջ 194:

Հարկավ, «ծայրամասային կենտրոններն» ունեին գործողութենական ազատություն և Կենտրոնի հետ կապված էին առավելաբար տնտեսական նպատակահարմարության և ինքնապաշտպանության նպատակով:

Ձևավորվող համակարգը՝ հայկական աշխարհ-տնտեսությունը, խոշոր հաշվով, նպատակ ուներ ապահովելու հայոց ազգային կյանքի ինքնատնտեսումը՝ անցում ապահովելով ավանդական Նախաարդյունաբերական հասարակությունից դեպի Արդյունաբերական հասարակություն: Միով բանիվ՝ հայկականությունը կանգնած էր արդիականացման ճանապարհին, որի արդյունքում հնարավոր կլիներ վերահաստատել «մշակութային իմաստի և քաղաքակրթական նշանի միջև երբեմնի գոյություն ունեցող ներդաշնակ հարաբերությունները»<sup>77</sup>:

### 3. Հայկական աշխարհ-տնտեսությունը և արդյունաբերական դարաշրջանի մարտահրավերները

Հիշենք՝ քաղաքակրթությունների բրոդեյյան տեսությունը ներկայանում է իբրև բազմաշերտ ու բազմիմաստ մի կառույց, որի մեջ (ըստ դարաշրջանի մարտահրավերի) կարող են ակտիվանալ նրա քաղաքական, մտակեցվածքային, կրոնական, տնտեսական և այլ բաղադրիչներ<sup>78</sup>: Հայկական աշխարհ-տնտեսության պարագայում՝ Նոր ժամանակների արշալույսին մեծ կարևորություն ձեռք բերեց հասարակական կյանքի կազմակերպման «տնտեսական-տեխնոլոգիական» զարգացումը: Իսկ այս առաքելությունը կատարելու համար անհրաժեշտ էր ժամանակի քաղաքակրթական մարտահրավերներին համարժեք պատասխաններ մշակել: Դրանցից մենք հատկապես կարևորում ենք երեքը.

– քարավանային-ցամաքային առևտուրը (հիմնականում միջերկրածովյան) տեղափոխել «օվկիանոսային միջավայր»՝ ըստ առևտրի և տնտեսվարման նորագույն տեխնոլոգիաների,

– յուրացնել նորագույն բանկային տեխնոլոգիաները և կապիտալի համար ապահովել ծավալվելու նոր հեռանկարներ,

– իրական հողի վրա դնել ազգային պետականության վերականգնման գործը, որը հեռանկարում պետք է ապահովեր հայոց նոր ազգ-պետության կայացումը:

Համադրելով Բրոդեյի տեսությունը և Հայոց պատմության հետագա իրադարձությունները՝ փորձենք պարզաբանել, թե հայ առևտրականությունն ինչ աստիճանով կարողացավ պատասխանել տվյալ քաղաքակրթական մարտահրավերներին: Դա կօգնի ձիշտ և համակողմանի գնահատել նրա դերակատարությունը պատմության հեռանկարում:

**Ցամաքային-քարավանային առևտրից ծովային առևտրին անցնելու մարտահրավերները:** Ինչպես նշեցինք, XVI-XVII դդ. արմատապես փոխվեց Արևմուտքի և Արևելքի տնտեսական փոխհարաբերությունների կեր-

77 Ստեփանյան Ա., Ինքնության ազգային չափումը [Նախնական դատողություններ], Ինքնության հարցեր, Տարեգիրք, Խմբ. Ա. Ստեփանյան, Եր., 2002, էջ 25:

78 Տե՛ս Հովհաննիսյան Ս., Ֆերնան Բրոդեյի պատմության տեսությունը, «Կէն», Գ (Թ) տարի, 2011, 1 (33) ապրիլ-հունիս, էջ 98-99, 110:

այլ և կառույցը<sup>79</sup>: Ի մասնավորի՝ դրա հետևանքը եղավ այն, որ Միջերկրական ծովով և Ռուսաստանի վրայով իրականացվող առևտուրն աստիճանաբար կորցրեց իր դերն ու արդյունավետությունը: Եվրոպան սկսեց Արևելքի հետ կապերն իրականացնել առավելաբար ծովով և օվկիանոսով: Լոնդոնում, Ամստերդամում, Փարիզում, Լիսաբոնում, Համբուրգում և այլուր սկսեցին ձևավորվել խոշոր առևտրային և բանկային միություններ՝ իրենց ֆինանսական խոշոր միջոցներով, նավատորմերով, զինված ուժերով, կառավարող պաշտոնեությունը: Իրենց թիկունքում նրանք ունեին պետությունների անթաքույց աջակցությունը՝ Անգլիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Պորտուգալիա: Այսու՝ ցամաքային-քարավանային առևտուրն այլևս անկարող էր ապահովել այսօրինակ փոխանակումների ծավալն ու որակը: Ուստի այն աստիճանաբար տկարացավ և ի վերջո (XVIII դարի երկրորդ կեսին) կորցրեց իր նշանակությունը: Գերակա դերակատարությունն անցավ ծովային առևտրին. «ծովում և օվկիանոսում սկսվեց ուրվագծվել Եվրոպայի զարգացման հեռանկարը»<sup>80</sup>, և պատմության ասպարեզ իջան «ծովային մեծ ազգերը»՝ իսպանացիները, պորտուգալացիները, իսկ ապա՝ հոլանդացիներն ու անգլիացիները<sup>81</sup>: Միաժամանակ ծովերում սկսեցին մեծ ուժ ներկայացնել ծովահենները, որոնք թեպետ դուրս էին օրենքից, սակայն վերջին հաշվով իրենց համարում էին անգլիացի, հոլանդացի կամ ֆրանսիացի<sup>82</sup>: Դա արտահայտությունն էր այն խորքային տեղաշարժի, որի հետևանքով **Միջերկրածովյան Եվրոպան** իր տեղն աստիճանաբար զիջեց **Ատլանտյան Եվրոպային**<sup>83</sup>: Քաղաքակրթական առումով՝ ավարտվում էր անցումը Նախաարդյունաբերական հասարակությունից դեպի Արդյունաբերական հասարակություն: Միջերկրածովքն իր արևելյան դանդաղ և «համբերատար» առևտրով դառնում էր անցյալ: Եվրոպակենտրոն արդյունաբերական քաղաքակրթությունը տիրական էր դառնում:

Նման պայմաններում հայ առևտրականների ցամաքային-քարավանային առևտուրը դարձավ լուսանցքային (մարգինալ) և անհեռանկար<sup>84</sup>: Այն դուրս էր մնում համաշխարհային տեղաշարժերի ընդհանուր հունից: XVII դարի երկրորդ կեսից նրանք սկսեցին ավելի ու ավելի զգալ եվրոպական ձեռներեցների կոշտ մրցակցությունը: Դա իրական դարձավ նախ Սուրաթում, իսկ ապա՝ Հնդկաստանի ծովահայաց քաղաքներում (Կալկաթա, Մադրաս): Սկզբում ակտիվ էին պորտուգալացիներն ու ֆրանսիացիները, իսկ ապա նրանց դիրքերը գրավեցին անգլիացիները: Վերջիններս գործում էին խիստ նպատակամետ<sup>85</sup>: Նախապես, երբ դեռ թույլ էին, որոշեցին վերահսկողություն սահմանել հնդկահայ առևտրականների նկատմամբ:

79 Տե՛ս Rosenberg N., Birdzell Jr. L. E., How the West Grew Rich: The Economic Transformation of the Industrial World, New York: Basic. Books, 1986.

80 Տե՛ս Braudel F., The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II, Volume I, Translated from the French by Siân Reynolds, New York: Harper & Row, 1972, p. 188-191.

81 Տե՛ս Ibidem.

82 Տե՛ս Ibid., pp. 865-891.

83 Տե՛ս Braudel F., The Mediterranean and the Mediterranean world in the age of Phillip II, Volume II, p. 835.

84 Ավելի մանրամասն տե՛ս Барсегов Ю. Г., Из истории борьбы Армянского купечество против Европейского пиратства в XVII в., ՊԻՇ, 2, (1984), сс. 35-42.

85 Տե՛ս Braudel F., Civilization and capitalism, 15th-18th century. Vol. 3, The perspective of the world. Trans. Siân Reynolds, New York: Harper and Row, 1984, p. 503-511.

Դրա ծնունդը հանդիսացավ Օստ-հնդկական առևտրական միության և հայերի միջև 1688 թվականին կնքված պայմանագիրը<sup>86</sup>: Հայ առևտրականների շահերը ներկայացնում էր խոջա Փանոս Քալանթարը: Պայմանագրի կարևորագույն հոդվածներից մեկը վկայում էր, որ «հայ վաճառականներն այսուհետ կարող են իրենց ապրանքներն արտահանել անգլիական ուղիներով»՝ օգտվելով անգլիացիներին պատկանող նավահանգիստներից, պահեստներից և նավերից<sup>87</sup>:

Լեոյի դիպուկ բնորոշմամբ՝ «ցամաքագնաց և կարավանավար խոջան դառնում է ծովագնաց, օվկիանոսների վրա առևտուր անող»<sup>88</sup>: Գնահատությունը լավատեսական երանգ ունի, սակայն միանգամայն հեռու է պատմական իրականությունից՝ մնալով իբրև հնարավորություն: Ակնհայտ է, որ այս պայմանագիրը մի կողմից՝ հարվածում էր Հալեպում հաստատված ֆրանսիացիներին, մյուս կողմից՝ ռուս-իրանական առևտրին<sup>89</sup>: Թերևս դրանով էր պայմանավորված, որ արդեն 1689 թվականին ռուսական կառավարությունը, բացի «Հայկական առևտրական ընկերության» անդամներից, բոլոր արևելյան առևտրականներին արգելեց Ռուսաստանի վրայով առևտուր անել արևմտաեվրոպական երկրների հետ<sup>90</sup>: Հայ առևտրականներին սիրաշահելու մտայնություն ուներ և Լուի XIV-ը, որպեսզի Մարսելը չկորցնի իր երբեմնի նշանակությունը. ձեռնարկվում են համապատասխան քայլեր, որպեսզի «այդ խոջան իր նախկին ճանապարհով գնա իր առևտրին, այսինքն Ֆրանսիայի վրայով»<sup>91</sup>: Արդյունքում հայերի համար, Ռոջեր Սելվորիի ձեակերպմամբ՝ «Լևանտյան ընկերության հետ սերտ համագործակցությամբ Հալեպի ճանապարհով ստացվելիք եկամուտները շարունակում էին ավելի գայթակղիչ լինել, քան Պարսից ծոցով անցնող ծովային ուղու անորոշ հեռանկարները»<sup>92</sup>: Եվ իրոք՝ ինչպես պարզվեց հետագայում, հայ առևտրականների մեծամասնությունը խիստ անտարբեր գտնվեց բացվող հեռանկարի նկատմամբ: Քայլ իսկ չարեց իր գործունեությունը նորացնելու և այլ միջավայր տեղափոխելու համար. «քարավանային առևտրի մեջ ներգրավված հայ առևտրականները ամեն-

86 Տե՛ս **Seth M. J.**, *op. cit.*, p. 48: Նկատենք, որ պայմանագիրը կնքվել է Լոնդոնում և ոչ թե Սուրաթում, ինչպես նշում են Աշոտ Հովհաննիսյանն (**Հովհաննիսյան Ա.**, Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1 (1958), էջ 85; **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Հ. Բ., էջ 450) ու **Վահան Բայբուրդյանը (Բայբուրդյան Վ.)**, Համաշխարհային առևտուրը, էջ 220): Ընդամին՝ Խոջա Քալանթարն այս ժամանակ ապրում էր Լոնդոնում (տե՛ս **Baladouni V.** and **Makepeace M.**, *Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries: English EastIndia Company Sources, American Philosophical Society Independence Square, Philadelphia, 1998*, p. xxii; **Այսանեան Ս.Գ.**, Ջուդայեցի վաճառականներ և կրոնական արևելահնդկական ընկերություններ, ցամաքային առևտուր, պաշտպանության ծախսեր և հաւաքական ինքնաներկայացման սահմանները վաղ արդի Սեֆեան Իրանի մեջ, «Հանդէս Ամսօրեայ», 2015, էջ 251):

87 «Ազգաւեր», հատ. Բ, N 38, Կալկաթա, 1846, էջ 139. Տե՛ս [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Azgaser/1846/1846\(38\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Azgaser/1846/1846(38).pdf) (19.12.2014); **Seth M. J.** *Armenians in India from the Earliest Times to the Present Day*, Calcutta, 1937, p. 231-244; **Ferrier R. W.**, *The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Centuries*, *The Economic History Review*, Vol. 26, No. 1 (1973), p. 427:

88 **Լեո**, Խոջայական կապիտալը, էջ 85:

89 Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1 (1958), էջ 86:

90 Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Համաշխարհային առևտուրը, էջ 178-179:

91 **Լեո**, Խոջայական կապիտալը, էջ 106:

92 **Savory R.**, *Iran Under the Safavids*, Cambridge, London, New York, New Rochelle, Melbourne, Sydney: Cambridge University Press, 2007, p. 201. Նկատենք, որ

նևին շահագրգիռ չէին այս պայմանագրի իրագործմամբ»<sup>93</sup>: Պայմանագիրը մնաց թղթի վրա և վերածվեց սոսկ պատմական ուշագրավ փաստաթղթի: Պատճառները պետք է փնտրել հայ ազգային մտակեցվածքի մեջ: Այն չէր թողափել ավանդականության բեռը, ընդհանուր առմամբ դեռ անհաղորդ էր եվրոպական նորագույն մտահոգևոր և տեխնոլոգիական արժեքներին:

Այլ կերպ ասած՝ Արևմուտք-Արևելք հարաբերությունների նոր ձևաչափը բանաձևվում է իբրև արդյունաբերական և ավանդական-արևելյան քաղաքակրթությունների հանդիպում: Ընդ որում՝ արևելյան քաղաքակրթություններին այդ «հանդիպման» մեջ վերապահվում էր կրավորական դերակատարություն: Իսկ խոշոր հաշվով՝ հայ առևտրականներն իրենց դեռ չէին զգում (և չէին էլ կարող զգալ) նոր ձևավորվող (Արդյունաբերական դարաշրջանի) ազգի ներկայացուցիչներ: Ազգ, որի հիմնական հասարակական մղումը սեփական պետության նորոգումն էր կամ վերստեղծումը:

### **Վաշխառուական-ֆինանսական հարաբերություններից դեպի բանկային համակարգին անցման մարտահրավերները:**

Ինչպես վերը նշեցինք, Նախաարդյունաբերական քաղաքակրթության ծիրում աստիճանաբար մեծ նշանակություն էին ստանում դրամական-վարկային վճարումները: Խոշոր միավորումներին անհրաժեշտ էին խոշոր վարկատուներ, ուստի մեծ կարևորություն է ստանում առևտրականների վարկավորման (մասնավորապես դրամը մի երկրից մյուսը փոխադրելու) հիմնախնդիրը: Ինչպես արդեն ասել ենք, առաջին անգամ գործադրվում են «ոչ առկա դրամի գործառույթները»՝ ըստ մուրհակների և գրավոր պարտավորությունների (վեկսել): Բանն այն էր, որ արտաքին առևտրական գործունեության մեջ ներառված առևտրականների համար դժվարացել էր դրամի փոխադրումը մի վայրից մյուսը, մի երկրից մեկ ուրիշ երկիր: Մասնավորապես, երբ կողոպտվելու վտանգը մշտապես առկա էր: Հիշյալ պահանջներին համապատասխան՝ մեծ կիրառություն են ստանում վարկավորման և դրամի փոխադրման եղանակները: Ձևավորվում է բանկային գործունեության համակարգը<sup>94</sup>: Հիշյալ ժամանակահատվածը (XVI-XVII դդ.) յուրօրինակ մի սահմանագիծ էր, որից հետո բանկերը սկսեցին հանդես գալ իբրև տնտեսության առանձին և անհրաժեշտ հատված:

Անշուշտ, հայ առևտրականները չէին կարող անմասն մնալ քաղաքակրթական-տնտեսական այս խորքային տեղաշարժի ներազդեցությունից: Վկայություններ կան, որ XVII դարի և XVIII դարի առաջին կեսի ընթացքում հայ առևտրականները կարողացել են մշակել վարկատվության և կապիտալի փոխադրման նոր ժամանակներին համապատասխան մի համակարգ<sup>95</sup>: Միջնադարյան Իրանում և նրա հետ առևտրական սերտ հարաբերությունների մեջ գտնվող հարևան երկրներում լայն տարածում էր գտել փոխանցումային մուրհակը («չեկը»), որը լայնորեն կիրառվում էր և հայ առևտրականների միջավայրում<sup>96</sup>: Փոխանցումային մուրհակը հայ առևտրականների շրջանակներում բաժանված էր երկու ինքնատիպ տարատե-

93 Փափագյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները, էջ 80:

94 Տե՛ս Braudel F., Civilization and capitalism, 15th-18th century. Vol. 2, The Wheels of Commerce. Trans. Siân Reynolds, New York: Harper and Row, 1984, pp. 390-395.

95 Տե՛ս Խաչիկյան Շ., սշվ. աշխ., էջ 172:

96 Տե՛ս Անդ, էջ 168:

սակների: Առաջինը, որը ամենատարածվածն էր, հայտնի էր տարբեր անուններով: Նոր Զուղայում գործածական էին «ավաք» (մուրհակ), «զմեի ավաք» (երաշխավորված մուրհակ) կամ «զմեի բի ջուքամ ավաք» (երաշխավորված առանց գրավի մուրհակ) եզրերը: Աստրախանի և Հայաստանի զանազան վայրերում մեծ կիրառություն ուներ «բարաթ» եզրը, իսկ Հնդկաստանում «հինդվի» եզրերը: Երկրորդ տեսակը կոչվում էր «ջուքմի ավաք» (ապրանքով կամ գրավականով մուրհակ): Ըստ այդմ՝ առևտրականը մի վայրից մյուսը ճանապարհորդելիս (հարկավ, առևտրական նպատակներով) իր դրամն ի պահ էր տալիս տվյալ վայրում գործող և ուրիշ վայրերի հետ համագործակցող դրամափոխին և ստանում համապատասխան փոխանցումային մուրհակը: Իսկ ժամանած վայրում հիշյալ «չեկի» միջոցով վերոհիշյալ դրամափոխի հետ համագործակցող անձնավորությունից նա հետ էր ստանում իր հասանելիք դրամը (անշուշտ, կատարված ծառայության դիմաց որոշակի գումար թողնելով)<sup>97</sup>:

Ակտիվորեն ներգրավված լինելով դրամական հարաբերությունների մեջ՝ հայ առևտրականներն անգամ ունեցել են «սեփական բանկը»<sup>98</sup>: Չնայած դրան՝ վերջին հաշվով նրանք այդպես էլ չկարողացան հրաժարվել միջնադարից ժառանգած դրամական հարաբերությունները կարգավորող վաշխառուական սկզբունքներից: Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները անկարող գտնվեցին գնահատել թե՛ առևտրական ընկերությունների, թե՛ բանկային գործունեության հեռանկարայնությունը և, մեծ իմասամբ, մնացին առկա դրամի և կոնկրետ առևտրական գործողությունների ծիրում: Երբեմն անգամ դրան էլ չէին հասնում: Այնինչ հանձինս առևտրական ընկերությունների և բանկային գործունեության՝ նրանք հնարավորություն ունեին «վերադառնալ» պատմություն:

**Ազգային պետականության վերականգնման հիմնախնդիրը:** XVII–XVIII դարերում եվրոպական պատմության հիմնական դերակատարներ են դառնում **ազգ-պետությունները**՝ իրենց կայունության ձգտող սահմաններով, օրենքներով, պետական-քաղաքական հաստատություններով<sup>99</sup>: Վերջիններիս օրինականացման հիմքը (ի տարբերություն միջնադարյան դինաստիական սկզբունքի) համարվում էր ազգի (կամ նրա ներունակ հատվածի) հավաքական կամքը: Նման պետությունների կայացումն ընթանում էր Արդյունաբերական քաղաքակրթության խորացմանը համընթաց, բայց տարբեր ճանապարհներով՝ մերթ լուսավորյալ միապետության (Ֆրանսիա, Պրուսիա, Ավստրիա, Ռուսաստան), մերթ հեղափոխության (Անգլիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա), մերթ խորհրդարանային-կուսակցական փոխզիջման (Անգլիա): Բոլոր դեպքերում միտումը մեկն էր՝ հասարակության պետական-քաղաքական և իրավական կառույցները համապատասխան

97 Տե՛ս Անդ:

98 Տե՛ս Միքայելյան Վ., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Եր., 1969, էջ 147:

99 Տե՛ս Smith A. D., Nationalism and Modernism: A Critical Survey of Recent Theories of Nations and Nationalism, London & New York: Routledge, 1998, pp. 49–69; Hobsbawm E. J., Nations and Nationalism Since 1780: Programme, Myth, Reality, Cambridge [England]: Cambridge University Press, 1992, pp. 14–45; Anderson B., Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London & New York: Revised, 2006, pp. 37–46; Gellner E., Nations and Nationalism (New Perspectives on the Past), Ithaca, New York: Cornell University Press, 1983, pp. 19–51.



նեցնել քաղաքակրթական նոր պայմաններին: Ուստի պատահական չէր, որ XVII դարի երկրորդ կեսից պետականության վերականգնման ճիգը հայոց միջավայրում ևս վերելք է ապրում և աստիճանաբար ձեռք է բերում հստակ արտահայտված համակարգային բնույթ: Գործընթացը համակողմանիորեն լուսաբանված է արդի հայ պատմագիտության մեջ: Դրան իրենց նպաստն են բերել մի շարք ակնավոր հետազոտողներ<sup>100</sup>, ուստի մեր խնդիրը չէ անդրադառնալ այս հիմնախնդրի մանրամասներին: Մեր նպատակն է ներկայացնել պետականության վերականգնմանը միտված այն «գործողութենական ուտոպիան», որը հայոց ազգային ինքնության նորացման անկապտելի մասն է:

Շիշյալ ուտոպիան պարառում է մոտավորապես հետևյալ պատկերը. 1677 թվականին կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու նախաձեռնությամբ էջմիածնում հրավիրված գաղտնի ժողովը՝ նպատակ ունենալով դիմելու եվրոպական տերություններին ազատագրելու «քրիստոնյա Հայաստանը մահմեդական լծից»<sup>101</sup>, 1690–1710 թվականները՝ Իսրայել Օրու գործունեությունը Հայաստանն ազատագրելու նախ՝ Եվրոպայի (Պֆալց, Ֆլորենցիա, Ավստրիական տերություն), իսկ ապա Ռուսաստանի օգնությամբ, 1722–1730 թվականների ազգային ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում՝ Դավիթ Բեկի և Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի գլխավորությամբ, 1750–1770 թվականներ՝ Հովսեփ Էմինի անդուլ գործունեությունը հայրենիքն ազատագրելու առաքելությամբ՝ մի կողմից՝ Ռուսաստանի ու Վրաստանի օգնությամբ, մյուս կողմից՝ համազգային զինված ապստամբությամբ, 1760–1790 թվականներ՝ դիվանագիտական ակտիվ հարաբերություններ ռուսական արքունիքի հետ և ազատագրության մանրամասն ծրագրերի մշակում՝ Մովսես Սարաֆյան, Հովսեփ Արղության, Շահամիր Շահամիրյան: Այդ նույն ժամանակաշրջանում կատարվում է աննախընթաց գործ՝ գծելու ապագա Հայաստանի իրավաքաղաքական ճշգրիտ պատկերը<sup>102</sup>: Հատկանշական է այս կապակցությամբ Մադրասի խմբակի աշխատանքը՝ ներշնչված Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի գաղափարներով: Ի հայտ են գալիս երկու կրթողային աշխատություններ՝ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց»: Դրանք կառուցված էին ժամանակի առաջավոր (լուսավորական) տեսությունների վրա՝ իրավագիտական, պատմագիտական, ազգագրական, քաղաքագիտական<sup>103</sup>:

Այս «գործողութենական ուտոպիան», սակայն, չհանգեցրեց սպասված արդյունքին. հայոց պետականությունը չվերականգնվեց: Պատճառները բազմաբնույթ էին: Ի շարս դրանց հետազոտողները հաճախ մատնանշում

100 Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Եր., 1957, գիրք երկրորդ, Եր., 1959; **Ջուլայյան Մ. Կ.**, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966; նույնի՝ Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ., Եր., 1980; նույնի՝ Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII–XVIII դդ., Գիրք Ա, Քաղաքական պատմություն, Եր., 1990; **Անասյան Հ. Ա.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1962; **Иоаннисян А. Р.**, Иосиф Эмин, Е., 1945, և այլք:

101 **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. III, գիրք I, էջ 337:

102 Տե՛ս **Aslanyan S. D.** Օր. cit., p. 214.

103 Տե՛ս **Иоаннисян А. Р.**, Иосиф Эмин, Е., 1945, с. 295.

են երկրի ավատատիրական հետամնացությունը<sup>104</sup>, արտագաղթի մեծ ծավալը<sup>105</sup>, օտարերկրյա (օսմանյան և պարսկական) տիրապետությունը<sup>106</sup>, ռուսական արտաքին քաղաքականության վայրիվերումները<sup>107</sup>, եվրոպական տերությունների անբարյացակամ վերաբերմունքը<sup>108</sup> և այլն: Հարկավ, դրանցից յուրաքանչյուրը արտահայտում է պատմական ճշմարտության այս կամ այն կողմը: Սակայն անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել հիմնախնդրի քաղաքակրթական դիտանկյանը, մինչդեռ այն ի գորու է վեր հանել պատմության խորքային իրողություններ:

Հիմնախնդրի քաղաքակրթական լուսաբանումը վկայում է հետևյալը: XVIII դարի երկրորդ կեսին արդեն ակներև էր դարձել խզումը հայոց քաղաքակրթական ինքնանորոգման գործընթացի տարբեր մակարդակների միջև: Ի մասնավորի՝ մարում է նրա էներգիայի հիմնական աղբյուրը՝ առևտրական կապիտալը: Դրա հետ մեկտեղ՝ ձեռներեցների այն ընկերային դասը, որն առավել շահագրգռված էր ազգային արդիական պետականությամբ: Կրկնենք՝ այն չկարողացավ վերականգնել իր գործունեությունն ըստ ժամանակի ձեռներեցության սկզբունքների, ուստի պետականությունը չվերականգնվեց: Արտաքին և ներքին քաղաքակրթական մարտահրավերների պատասխանը մնաց հայոց ազգային մշակույթի վրա: Այսպես եղել էր V դարից ի վեր: Եվ Նոր ժամանակների արշալույսին հայոց մշակույթը անշեղորեն զարգանում էր՝ յուրացնելով ժամանակի հասարակական մտքի նվաճումները: Դրա լավագույն վկայություններն են 1512 թվականից սկզբնավորված հայոց գրատպությունը: Արդիական դպրոցների լայն ցանցի ստեղծումն աշխարհի տարբեր ծայրերում՝ Վենետիկից մինչև Մադրաս ու Կալկաթա, Կոստանդնուպոլսից մինչև Էջմիածին, Նոր Նախիջևան ու Մոսկվա: Տպավորիչ էր գիտական մտքի նոր հարացույցների սաղմնավորումը հայոց միջավայրում: Այդ առումով անգնահատելի էր Մխիթարյանների գործունեությունը՝ սկզբնավորված 1717 թվականին Մխիթար Սեբաստացու ջանքերով: Ազգային պետականության վերականգնման ճիգը չէր խամրել անգամ 1827 թվականին՝ Երևանի գրավման ժամանակ: «Գործողութենական ծրագիրը» այս անգամ նպատակ ուներ Հայկական մարզ կոչված երկրամասի սահմաններում վերականգնված տեսնել Հայաստանի ինքնավարությունը<sup>109</sup>:

104 Տե՛ս Անասյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 10:

105 Տե՛ս Braudel F., The Mediterranean and the Mediterranean world in the age of Phillip II, Volume I, Translated from the French by Siân Reynolds, New York: Harper & Row, 1972, p.51.

106 Տե՛ս Հովհաննիսյան Ա., Անասյան Հ. Ս., XVIII դարերի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, «ՊԲՀ», 1, (1963), էջ 235-248:

107 Տե՛ս Լեո, Խոջայական կապիտալը, էջ 219:

108 Տե՛ս Հակոբյան Վ. Ա., Մեծարժեք մենագրություն, «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների), 9, (1962), էջ 87; Զուլպյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը, էջ 371:

109 Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., հատ. Բ, էջ 638:

## Ամփոփում

Ընդհանրացնելով նկատենք, որ XVI-XVIII դդ. միջազգային առևտրի և նրանում հայ առևտրական կապիտալի դերի ուսումնասիրությունը բերում է հետևյալ հետաքրքիր հետևությանը: Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանը թեպետ մասնատված էր Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան տերության միջև և գտնվում էր քաղաքական, տնտեսական և մշակութային տարբեր մակարդակների վրա, այնուամենայնիվ կարողացավ արձանագրել առևտրատնտեսական կյանքի զգալի առաջընթաց: Դա պայմանավորված էր նախ և առաջ համակեցական կյանքի քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական ռիթմերի փոքր ի շատե համընկմամբ: Հայ առևտրականության համար սկսած 1610-ական թվականներից, իսկ ավելի ինտենսիվորեն՝ 1630-ական թվականներից, ստեղծվել էին նպաստավոր պայմաններ:

**Քաղաքական առումով՝** երբ 1639 թվականի մայիսի 17-ին Կասր-ե Շիրինում կնքված պայմանագրով Օսմանյան տերության և Սեֆյան Պարսկաստանի միջև հաստատվեց խաղաղություն: Երկու հատվածներում էլ ստեղծվեցին տանելի պայմաններ: Երկիրը սկսեց բուժել իր վերքերը:

**Տնտեսական առումով՝** պարսկական կողմը որոշել էր մետաքսի քարավանային ճանապարհը տեղափոխել դեպի հարավ, որպեսզի գրկի Օսմանյան տերությանը եկամուտներից: Դրա իրագործման համար պարսկական արքունիքը սկսեց ակտիվ օգտագործել հայ առևտրականների ներուժը՝ տալով նրանց մեծ արտոնություններ: Այդ կապակցությամբ Լևանտյան առևտրում շեշտակի աճեց հայ առևտրականների մասնակցությունը: Դրան նպաստեցին բազում հայկական գաղթավայրերը, որոնք գտնվում էին տարանցիկ առևտրի կարևորագույն հանգրվաններում:

**Քաղաքակրթական առումով՝** 1639 թվականի խաղաղության դաշնագրից հետո հավանական դարձավ հակամարտող կողմերի երկխոսությունը: Արևմուտքի երկրներում տնտեսական վերելք էր սկսվել, և նրանք Արևելքից եկող հումքի մեծ կարիք ունեին: Ուստի երեկվա անհաշտ հակառակորդներն աստիճանաբար եկան փոխզիջման, և քարավանային առևտուրը կրկին աշխուժացավ: Այս առումով՝ Արևելքի և Արևմուտքի միջև միջնորդ առևտրականների հիմնախնդիրը դառնում էր հույժ կենսական, և այս դերակատարումը մասամբ իրենց վրա վերցրին հայ առևտրականները: Նրանք համեմատաբար հանդուրժողական վերաբերմունքի էին արժանանում թե՛ Օսմանյան տերությունում և թե՛ Եվրոպայում:

Այսպիսով, Նոր ժամանակների արշալույսին (XVI-XVII դդ.) տեղի ունեցած «քաղաքակրթական հերթափոխության» համատեքստում արմատական տեղաշարժեր գրանցվեցին համակեցական կյանքի բոլոր բնագավառներում՝ սկսած արտադրական տեխնոլոգիաներից մինչև հասարակական միտք և պետական կառույց: Նման արմատական տեղաշարժերի հետևանքով զարգացած երկրների տնտեսության տարբեր ճյուղերի կապերն ու փոխազդեցությունները դարձան ավելի սերտ և համակարգային: Դրանք նախապայմաններ ստեղծեցին «աշխարհ-տնտեսությունների» ակ-

տիվացման և դերակատարման բարձրացման համար: Փոխակերպությունների այս համատեքստում հայ առևտրական կապիտալի ծավալումը կատարվում էր ավելի ձկուն և ընդգրկուն մի համակարգով: Վերջինիս ծիրում միմյանց լծորդվում էին ազգայինն ու համամարդկայինը: Դրա հետևանքով՝ ուրվագծվում էին հայ առևտրական կապիտալի ինքնադրսևորման նորանոր հնարավորություններ: Այն կրում էր որակական փոփոխություններ՝ կազմավորվելով իբրև «աշխարհ-տնտեսություն» և ընդգրկելով ահռելի էթնոքաղաքական համալիր, որը հատանցելով միմյանց էր շաղկապում այլազան «աշխարհ-տնտեսություններ» և տարբեր պետական միավորներ: Ուներ իր աշխարհագրական կենտրոնը (Նոր Զուղա), որտեղից Արևելք-Արևմուտք տարածվող «ուժային խթանները» կազմակերպում, կարգաբերում և ինչ-որ չափով նաև կառավարում էին միջազգային ցամաքային առևտրի հսկայական զարկերակը: Այս գերակայությունը ձևավորել էր մի համացանց, որը միավորում էր Սուրաթը, Մադրասը, Կալկաթան, Կոստանդնուպոլիսը, Զնյունիան, Մոսկվան, Կրակովը, Լվովը, Վենետիկը, Ամստերդամը և այլ կենտրոններ: Շրջանառվում էր պատկառելի կապիտալ:

Ձևավորվող համակարգը, խոշոր հաշվով, ստանձնել էր հայոց ազգային կյանքի ինքնանորացման գործը՝ Նախաարդյունաբերական հասարակությունից դեպի Արդյունաբերական հասարակություն անցումն ապահովելու նպատակով: Այսպիսով, հայկականությունը կանգնած էր արդիականացման ճանապարհին, որի շնորհիվ հնարավոր կլիներ վերահաստատել «մշակութային իմաստի» և «քաղաքակրթական նշանի» միջև երբեմնի գոյություն ունեցող ներդաշնակ հարաբերությունները: Սակայն այս առաքելությունը հնարավոր էր ժամանակի քաղաքակրթական մարտահրավերներին համարժեք պատասխանի դեպքում: Դրանցից հատկապես կարևորվում էին երեքը. ա) քարավանային-ցամաքային (հիմնականում միջերկրածովյան) առևտուրը տեղափոխել «օվկիանոսային միջավայր»՝ ըստ առևտրի և տնտեսվարման նորագույն տեխնոլոգիաների, բ) յուրացնել նորագույն բանկային տեխնոլոգիաները և կապիտալի համար ապահովել ծավալվելու նոր հեռանկարներ, գ) իրական հողի վրա դնել ազգային պետականության վերականգնման գործը, որը հեռանկարում պետք է ապահովեր հայոց նորագույն ազգ-պետության կայացումը:

Ինչպես պարզվեց հետագայում, հայ առևտրականները չկարողացան թոթափել ավանդականության բեռը և խորքային տեղաշարժ չկատարեցին իրեն գործունեության նորացման և այլ միջավայրեր տեղափոխելու ուղղությամբ: Սպասված արդյունքի չհանգեցրեց և պետականության վերականգնման ճիգը:

**Սմբատ Խ. Հովհաննիսյան** – ԵՊՀ դասախոս, գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատմագրության, քաղաքակրթության, նշանագիտության և պատմության տեսությունների, նախաարդյունաբերական և արդյունաբերական դարաշրջանների հայ և համաշխարհային առևտրական կապիտալի զարգացման պատմությունը:

**ARMENIAN TRADE CAPITAL AS “WORLD-ECONOMY”**

**And the Challenges of the Industrial Era**

Smbat Kh. Hovhannisyan

**Key words** – Armenian merchants, Armenian Trade Capital, New Julfa, Fernand Braudel, Global History, Time’s Rhythms, World-Economy, Civilization Challenges.

This article discusses issues of Armenian trade capital in the context of Fernand Braudel’s theory of civilizations. While this topic was subject to a great deal of research, most researchers have primarily discussed political and economic aspects of trade capital. New approaches provide the opportunity to discuss the topic from the point of view of theory of civilizations. The comparative method is one of these methods aiming at studying issues of Armenian history in the context of global history.

On the bases of works of French Annales School and particularly of Fernand Braudel’s theory, one can discuss activities of Armenian merchants in global dimensions. The same applies to Armenian international commerce, which flourished in the 16th-18th centuries.

In this paper, I discuss the problem in a broad context of the industrial civilization and rely on Braudel’s theory of global history, which is based on three fundamental (temporal and axiological) algorithms of history: political, economic, and civilizational. They set up the essence and rhythm of global history. For this purpose, I suggest consider the network of Armenian merchants as a “world-economy,” which was characterized by the following components: a/ A definite geographic space and boundaries of communication, that transform even if slowly; b/ Existence of a center such as a leading city (or cities); c/ Hierarchical structure.

The emerging system also served the purpose of recovering Armenian statehood by facilitating the move from a pre-Industrial society to an Industrial one. However, the successful completion of this mission was possible only through a adequate response to the civilizational challenges of the time. Among these, the three most important responses were: 1) moving from caravan and land commerce to an “oceanic” environment in accordance with the most up to date technologies of trade and economy; b) learning to use he newest banking technologies and discovery of new means of capital development; c) efforts of restoring national statehood on solid grounds in order to instigate the formation of the modern national state for the Armenians.

As further developments showed, Armenian merchants neither managed to drop the burden of tradition nor make sufficient radical transformations to their activities to adapt to new environment. Efforts to restore statehood did not bring about the anticipated result and no Armenian state was established.

## АРМЯНСКИЙ ТОРГОВЫЙ КАПИТАЛ КАК “МИР-ЭКОНОМИКА”

### И вызовы индустриальной эпохи

Смбат Х. Оганнисян

**Ключевые слова** – армянские торговцы, армянский торговый капитал, Новая Джульфа, Фернан Бродель, глобальная история, ритмы времени, мир-экономика, цивилизационные вызовы.

В статье обсуждаются вопросы армянского торгового капитала в контексте теории цивилизаций Ф. Броделя. Несмотря на то, что существует большое количество исследований, посвященных этой теме, большинство из них затрагивает, прежде всего, политические и экономические аспекты темы. Новые подходы обеспечивают возможность рассмотреть данную тему с точки зрения теории цивилизаций. Одним из таких является сравнительный метод, нацеленный на изучение проблем истории армян на фоне всемирной истории.

Исходя из трудов французской школы “Анналов”, и в частности, теории Фернана Броделя, деятельность армянских купцов можно рассмотреть в глобальных измерениях. То же самое можно сказать и об армянской международной торговле, которая процветала в 16–18 веках.

В данной статье мы рассматриваем эту проблему в более широком ракурсе индустриальной цивилизации, исходя из разработанной Броделем теории глобальной истории, которая основана на трех фундаментальных (временных и ценностных) алгоритмах истории: политическом, экономическом и цивилизационном. Они создают сущность и ритм мировой истории. Для этого, мы рекомендуем сформулировать эту сеть как “мир-экономику”, которая характеризовалась бы следующими компонентами: а) определенное географическое пространство и границы коммуникации, которые хотя и медленно, но преобразовываются; б) наличие центра в лице главенствующего города (или городов); в) иерархическая структура.

Формировавшаяся система также служила цели восстановления армянской государственности, облегчая переход от доиндустриального общества к индустриальной. Однако успешное завершение этой миссии было возможно только через адекватный ответ на цивилизационные вызовы времени. Среди них три наиболее важными ответами были: а) переход от караванной торговли и торговли по суше к торговле в “океанической” среде в соответствии с новейшими технологиями торговли и экономики; б) освоение новых банковских технологий и открытие новых перспектив развития капитала; в) направление усилий на становление национальной государственности на твердую почву для того, чтобы способствовать формированию современного армянского национального государства.

Как показало дальнейшее развитие событий, армянским купцам не удалось ни сбросить бремя традиций, ни предпринять достаточно радикальных изменений в своей деятельности по адаптации к новым условиям. Усилия по восстановлению государственности не принесли ожидаемого результата, и армянское государство не было создано.